

ՄԻՔ. ՄԻՐԶԱՅԱՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ
Յերգերն ու խաղերն



ՊԵՏՉՐԱՏ

1933
ՌԻՍՄԱԿՐԱՏԲՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

ՄԻՔ. ՄԻՐԶԱՅԱՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ
ՅԵՐԳԵՐ ՈՒ ԽԱՂԵՐ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐՈՎ



ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԶՐԱՏԱՐԱԿԶՈՒԹԹՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933

Ն Ա Ն Ա Ւ Ա Ն

Մեր մինչ այժմ լույս տեսած մանկական յերգերի ու խաղերի ժողովածուների մեջ քիչ տեղ է հատկացվել նախադպրոցական հիմնարկների զեղարվեստական դաստիարակչական պահանջներին: Այս ձեռնարկն իր մեջ ամփոփում է հատկապես նախադպրոցական հիմնարկների՝ մանկապարտեզների և մանկական հրապարակների յերգերը, խաղերը և նրանց դասավանդման մեթոդական գործնական ցուցմունքները: Այս ձեռնարկից կարող են ոգտվել, բացի նախադպրոցական հիմնարկներից, նաև մեր պոլիտեխնիկ դպրոցների զերո խմբերը, իսկ յերաժշտական բաժնից՝ նաև նրա առաջին և յերկրորդ խմբերը:

«Նախադպրոցական յերգեր ու խաղեր» կազմելիս ձեռքի տակ եմ ունեցել մի շարք աղբյուրներ: Նրանցից առավել չափով ոգտվել եմ Մինսկու, Միխայլովի, Պետրովի նախադպրոցական խաղերից, տալով նրանց համապատասխան յերաժշտական ձևավորում:

Յերաժշտութուն դասավանդման մեթոդական ցուցմունքները կազմելիս, ոգտվել եմ զերո խմբերի յերաժշտութւնն ծրագրից, ինչպես և մանկապարտեզների ու մանկական հրապարակների աշխատանքներին լավատեղյակ մասնագետներ—Ռումբերի և Մետլովի մանկավարժական հարուստ փորձից:

Այս ձեռնարկի մանկական խաղերի բաժինը կազմելիս իրենց ցուցմունքներով ոգնել են՝ Յերևանի Լուսբաժնի նախադպրոցականի կարինետը, նախադպրոցական սեկցիայի զեկավար Ս. Սամվելյանը և Ֆիզիկուլտ Գերագուն Սորճուրզը: Վերջինիս կողմից նշանակված ասիստենտ Վ. Վարդանյանն առավել չափով ոժանդակել է մանկական խաղերի վերջնական խմբագրման գործին:

Սույն ձեռնարկը քննվել է հաստատվել է Լուսժողովուրդի Մրազրամեթոդական Գիտահետազոտական կայանի, Պիոներ Կենտ. Բյուրոյի ուղղմ. Ֆիզիկուլտբաժնի և Ֆիզիկուլտ Գերագուն Սորճուրզի կողմից:

ՄԻՐԱՅՆԵԼ ՄԻՐՉԱՅԱՆ

Պատ. խմբագիր Մարտ. Մազմանյան
Տեխ. խմբագիր Գ. Ջեյյան
Նկարազարդեց՝ Ծ. Իսաբեկյան
Սրբագրիչ Լ. Մայիլյան



11-2610594

I. ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՅԵՎ ԽԱՂԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԹՈՂՈՎԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Յերաժշտական գեղարվեստական դաստիարակութիւնը կոմունիստական դաստիարակութեան ընդհանուր սիստեմի կարևոր ողակներէց մեկն է, վորը նպատակ ունի յերաժշտութեան միջոցով պատրաստել դասակարգայնորեն կայուն, տոկուն, սոցիալիզմի ակտիվ կառուցողներ:

Մանկապարտեզի և մանկական հրապարակիչների ղեկավարները, առաջնորդող նպատակ ունենալով այս խնդիրը, չնայած մանկապարտեզի սահմանափակ հնարավորութիւններին, գեղարվեստական դաստիարակութեան միջոցով, պետք է կազմակերպեն մանկան իրենց իրենց արվեստի մարքս-լենինյան հասկացողութեամբ:

Իրենց իրենց մեզ մոտիկ յերաժշտական նյութերի ոգտագործումը յերեխաների իրենց իրենց ձևակերպման, նրան կոմունիստական ուղղութիւն տալու գործում խոշոր դեր է կատարելու: Նկատի ունենալով յերաժշտութեան և խաղերի իրենց իրենց ընդլայնումը, պետք է հիշել, վոր յերեխաները զալով մանկապարտեզ՝ իրենց հետ բերում են իրենց իրենց շատ անհարգատ յերգեր ու խաղեր: Մանկապարտեզը պետք է խոշոր պայքար ծավալի դասակարգայնորեն խորթ նման տենդենցների դեմ և ներգործի յերեխաների վրա իրենց իրենց հարգատ յերաժշտական նյութերի ու խաղերի միջոցով:

Յերաժշտական աշխատանքներն ակտիվացնելու և բազմակողմանի դարձնելու նպատակով, յերգեցողութեանը զուգընթաց, մանկապարտեզը պետք է անցկացնի յերաժշտական ունիւրնդութեան և յերգերի հետ կապված խաղերն ու շարժումները: Յերաժշտական ձևերի այս ոգտագործումը կընպաստի աշխատանքի աշխուժացմանը և յերեխաների ակտիվացմանը:

Յերկրորդ և հիմնական մոմենտը հանդիսանում է յերաժշտական աշխատանքների կապը յերեխաներին շրջապատող և հետաքրքրող հասարակական կյանքի ինդիւրների և մարդկանց աշխատանքային գործունեութեան հետ: Յերաժշտութեան այդպիսի կապի շնորհիվ յերեխաներն աստիճանաբար կգան սոցիալիստական շինարարութեան գիտակցութեան:

Բայց և այնպէս այստեղ անհրաժեշտ է խուսափել այն սխալներից վորոնք կային կոմպլեքսային սիստեմում: Յերաժշտական աշխատանքները

պետք է կապել միմիայն այնպիսի թեմաների հետ, վորոնց հետ կապվելը բնական է ու դյուրին:

Մանկական կոլեկտիվը կազմակերպելու գործում ահազին դեր է կատարում յերաժշտութեանը: Յերաժշտութեան այս կազմակերպիչ ուժը պետք է ոգտագործել, յերեխայի մեջ ունակութիւնն դարձնել, վորը վոչ միայն պարամունքների և վորը մանկապարտեզային աշխատանքների ընթացքում արտահայտվի, այլ և կյանքում—կենցաղում:

Յեթե ղեկավարն ինքն է վարում յերաժշտական աշխատանքները, նրա համար հեշտ է ոգտագործել յերաժշտութեանն այն ժամանակ, յերբ հարմար է—դասամիջոցին, զբոսանքի ժամանակ, պարապմունքների ընթացքում վորպէս հանգստի միջոց և այլն. իսկ յեթե յերաժշտական աշխատանքները կատարում է մասնագետ յերաժիշտը, աչդ դեպքում Հափազանց կարևոր է, վոր պարապմունքներին ներկա գտնվի խմբակավարը, վորպէսզի հետագայում իր ամենորջա աշխատանքի ժամանակ ոգտագործի լսած յերաժշտութեանը:

Յերաժշտութեանն աստիճանաբար յերեխաների ամենորջա կենցաղի մեջ մտցնելն ամենալավ մեթոդն է դասակարգային խորթ յերաժշտութեանը դուրս վանելու համար:

Աշխատանքը պլանավորելիս պետք է նկատի ունենալ յերաժշտական ունակութիւնների աստիճանաբար զարգացնելու խնդիրը: Իրա համար նյութեր ընտրելիս պետք է խմբավորել վորոշ ձևով և ըստ բովանդակութեան: Ընտրելով մի քանի յերգ, քայլերգ, խաղ կամ պար, ցանկալի է նրանցից կազմել մի մեծ խաղ կամ պարզ ինսցենիւրովկա: Նման ինսցենիւրովկաները մեծ նշանակութիւն ունեն թե յերաժշտական աշխատանքի և թե վորոշ մանկավարժական աշխատանքի համար: Իրա շնորհիվ՝

Առաջին—յերեխաները գիտակցում են, վոր յերաժշտութեանը կապված է հասարակական աշխատանքային կարգի մի շարք յերևույթների հետ:

Յերկրորդ—աշխատանքն ավելի հետաքրքրական է դառնում, ակտիվացնում յերեխաներին, իսկ աչդ նպաստում է ուսման վորակի բարձրացման:

Յերրորդ—մի շարք հարցեր, վորոնց մասին խոսվում է պարապմունքների ժամանակ, գեղարվեստորեն ձևակերպվում են և ամրապնդվում:

Լավ է պարապմունքներն սկսել քայլերգով, վորից հետո յերեխաները կազմակերպված ձևով նստում են իրենց տեղերը: Հետո յերգում են և պարապմունքները վերջացնում շարժումներով:

Յերգեցողութեան ժամերին լավ է սկզբում անցնել նոր յերգ, ապա կրկնել ծանոթ յերգերը:

Շարժումների աշխատանքը պետք է սկսել այն շարժումներից, վորոնք կազմակերպում են կոլեկտիվը վորից հետո կարելի է անցնել նոր նյութի աւուցման—ձևավոր քայլվածքին, վարժութիւններին, խաղերին, պարերին և այլն: Հետո նորից կարելի է կրկնել հին նյութը և վերջացնել ընդհանուր շարժումներով, վորոնք աւանձին լարվածութիւն չեն պահանջում:

Այն պարապմունքների ժամանակ, յերբ մշակված նյութի հանրագումարն և տրվում (խաղ ինսցենսիրովկայի ձևով), իհարկե այլևս վոչ մի նոր նյութ չի տրվում:

Յերգի բնագիրն անցնելիս պետք է ուշադրութիւն դարձնել առողջանության և բովանդակութիւնը հասկանալի դարձնելու վրա, վորովհետև յերգի ազդու լինելը մեծ մասամբ կախված է այն բանից, թե յերեխաներն ինչ չափով են տիրապետել բնագրին և թե վերջինս ինչ չափով է հուզել նրանց:

Շարժումների ժամանակ յերեխաներն ավելի ցայտուն և ակտիվ գործունեութեան հնարավորութիւն են ստանում: Շարժումները խորացնում են յերաժշտութեան բովանդակութիւնը, ընդգծում այն և միաժամանակ ստիպում յերեխաներին հետևելու յերաժշտութեան ուղիներին:

Ղեկավարը, յեթե ուզում է թեկուզ համեստ չափով յերեխաների հետ տանել յերաժշտական աշխատանք, նա պետք է առաջադրած խնդրին վերաբերվի շատ լուրջ և բարեխղճորեն: Նա պետք է ուսումնասիրի այն մատերիալը, վորի հետ գործ ունի: Նա պետք է հիշի, վոր յերեխաները մանկապարտեզ են գալիս նվազ յերաժշտական հիշողութեամբ և լսողութեամբ, կազմում է նրանց ուղիղ, տոնիկ ըմբռնելու կարողութիւնը: Նա հենց սկզբի որերից պետք է ուժ տա յերեխաների այդ ունակութիւնները զարգացնելու գործին: Այս նպատակով, նա առանձին ուշադրութիւն դարձնելով յերգերի ընտրութիւններին, յուրաքանչյուր դասին պետք է նպատակադրի, թե ինչ ունակութիւն է ցանկանում զարգացնել սովյալ յերգն անցնելիս:

Նախ քան յերգն անցնելը, նա պետք է ուսումնասիրի անցնելիք յերգը, պարզի նրա ընդհանուր բնույթը, նրա առանձին մասերի ակցենտները, շնչառութեան տեղերը, տեմպը, կատարման դինամիկան և այլ: Այս բոլորն անելուց հետո միայն կարելի չէ անցնել յերգը յերեխայի հետ:

1. Առխառանգի սկիզբը

Կարելի չէ յերգը հարկադրաբար սովորեցնել յերեխաներին: Յերգը նախ պետք է յերգել, վոր յերեխաները լսեն: Յերեխաները սիրում են դեռևս յերգը լրիվ չլսած՝ ձայնակցել դասատուին: Այդ պետք է արգելել. յերեխաներն առաջին շրջանում չպետք է յերգեն և մի քանի անգամ լավ պետք է լսեն: Հավանելու դեպքում յերեխաները կամաց-կամաց կմասնակցեն յերգին ու կսովորեն: Յեթե յերգը չհամակց յերեխաներին, մյուս ուրը պետք է անցնել մի այլ յերգ: Դժվար է մատնանշել, թե ինչպիսի յերգով պետք է սկսե աշխատանքը. նայած հանգամանքներին, աշխատանքն սկսելու համար կարող են հարմար լինել տարբեր յերգեր: Լավ է, յեթե առաջին սովորած յերգն իր բովանդակութեամբ կապվում է կյանքի սովյալ մոմենտների հետ, որինակ՝ զրոսանքի հետ — մարշ, աշխատանքի ժամանակ՝ աշխատանքի յերգ, կենդանիների մասին տարված զրույցի ժամանակ՝ վորևե յերգ կենդանական աշխարհից և այլն:

2. Յերգը օտրումներով

Շատ յերգեր կապվում են նաև կազմակերպված շարժումների հետ, վորոնք դրսևորվում են խաղերով, քայլերթերով, շրջապարերով և այլն:

Բայց նախքան յերգը շարժումներով կատարելը, պետք է այդ յերգը նախորոք լավ սովորել:

Նախ պետք է անցնել ամենապարզ շարժումները: Շարժման հիմնական տեսակներն են — քայլերթը, վազքը, թռիչքը և իրանի, մարմնի զանազան մասերի զարգացման շարժումները: Սրանց վրա հիմնվելով կարելի չէ կազմակերպել մի շարք խաղեր ու վարժութիւններ:

Յերբ շարժումները կատարվում են յերգով, մասնակցողները կարող են յերգել այն դեպքում, յերբ խաղի շարժումներն արագ չեն:

Արագ շարժման — վազքի կամ թռիչքի ժամանակ յերգում է միայն դեկավարը. կամ թե յերեխաները բաժանվում են յերկու խմբի, վորոնցից մեկը յերգում է, իսկ մյուսը՝ մասնակցում շարժումներին: Հետո խմբերը փոխանակվում են: Պատահում է, վոր շարժումների ժամանակ յերեխաները շարունակում են յերգել. դանդաղ շարժումների ժամանակ այդ վտանգավոր չէ, իսկ արագ շարժումների ժամանակ նրանք շուտով դադարում են յերգել, արագ շարժումների ժամանակ նրանք համատեղելի և ոգտակար չեն: Ղեկավարը, համենայն դեպս, իր ուշադրութիւնը կենտրոնացնելու չէ յերգող խմբակի վրա. շարժում կատարողներին պետք է հիշեցնել, վոր չերգեն: Ղեկավարները պետք է հիշեն նաև մի շատ կարևոր հանգամանք — հանգիստ ժամանցից հետո չի կարելի տալ հանկարծ վազք. նրանց կարելի չէ աստիճանաբար հասցնել արագ վազքի, այն է՝ նախքան արագ խաղ անցկացնելը, պետք է տալ, թեկուզ շատ կարճ ժամանակով, հատու և աշխույժ քայլերթ: Նմանապես չի կարելի խաղն ընդհատել արագ և աշխույժ շարժումով, հարկավոր է կամ խաղի տեմպը դանդաղեցնել (որինակ՝ «Շոգեքարը» խաղը), կամ թե վորևե կազմակերպչական ձևով արագ շարժումը փոխարինել դանդաղ քայլերթով, կամ թե վերածել դանդաղ շուրջապարի: Յեթե յերեխաները վողեւրված են, կամ նրանց տրամադրութիւնը շատ բարձր է, հարկավոր է նրանց տալ վորևե ծանոթ, հետաքրքիր հանդարտեցնող խաղ, վորն իր հետաքրքրութեամբ ու բազմակողմանիութեամբ կարողանա փոխարինել աշխույժ խաղին և չթուլացնի յերեխաների աշխուժութիւնն ու տրամադրութիւնը: Այսպիսի մոմենտներին ղեկավարից պահանջվում է հմտութիւն և նուրբ մանկավարժական վերաբերմունք:

3. Նյութի խմբավորումը

Ժողովածուի ամբողջ նյութը՝ խաղերն ու յերգերը, բաժանվում են մասերի, վորոնք ըստ դժվարութիւնների հարմարեցված են փոքրահասակ, միջահասակ և մեծ յերեխաների կարողութիւններին:

4. Փոքրահասակներ

Յերեք կամ չորս տարեկան փոքրահասակ յերեխաներին մատչելի յեն ամենազարգ յերգերը. նման յերգերի թիվը սահմանափակ է:

Փոքրահասակ յերեխաների հետ պարապելիս, ղեկավարն ինքը պետք է հարմարվի նրանց. ղեկավարին չպետք է շփոթի այն բանը, վոր յերեխաները յերգի ընթացքում վորոշ պարբերություններին չեն ձայնակցում, կամ ուղղակի արտասանում են: Ղեկավարը պետք է նկատի ունենա յերեխաների ձայնի փոքր ծավալը. պետք է յերգի այն տոնով, վորը նրանց հարմար է ու մատչելի: Բայց յերեխաները վորքան ել քիչ յերգեն, այնուամենայնիվ վորևէ ձևով կարտահայտեն այդ յերգը, որինակ՝ ծափ տալով, ձեռքի ու վոտքի բախումներով, պարով և այլն:

Պետք է հնարավորություն տալ, վոր այդ շարժողական ռեակցիաներն արտահայտվեն նաև իմիտացիոն (նմանողական) խաղերի միջոցով:

Այնուհետև յերգով մարդ անցնելիս պետք է հիշել, վոր փոքրահասակները, յինչով իրենց կազմվածքի ատանձնահատկություններից, նրա թույլ զարգացումից, գծվար են արտապետում իրենց շարժումներին: Դրա համար ել մանկավարժն ինքը պետք է հարմարվի շարժման այն տեմպին, ուժին և շարժողությանը, վորը զարգացնում է յերեխան պրակտիկ խաղերի և շարժումների ընթացքում:

5. Մեծահասակներ

Միջակ և մեծահասակ յերեխաներին կարելի յի առաջադրել համեմատաբար ավելի բարդ խնդիրներ: Նյութեր անցնելիս պետք է միշտ նկատի առնել նրանց ուժերը: Մանրամասն ճշտությունների հասնելու համար չպետք է գիմել վարժությունների ծայրահեղ միջոցներին, այսինքն չպետք է միևնույն խնդիրը յերկար կրկնել և մեքենայորեն սովորեցնել:

Նկատելով, թե ինչն է գծվարացնում յերեխաներին, ղեկավարն այդ գծվար մասը պարզեցնում, թեթևացնում է: Այս ձևով յերեխաներն աստիանաբար տիրապետելով նյութին, ղեկավարը հեղհետե բարդացնելով նյութը, գալիս հասնում է նրա սկզբնական բարդ վիճակին: Որինակ՝ խաղի ժամանակ նրա բարդ շարժումները փոխարինում է ավելի պարզ շարժումներով, կամ թե խաղի մի մասը անցնում է նվազի տակ, իսկ մյուս մասը կատարվում ազատ տեմպով (որինակ քայլերթը կատարում են նվազի տեմպով, իսկ վազքը՝ ազատ):

6. Յերաժեսուրյան տեղը

Յերգը կազմված շարժումների հետ՝ տարբեր գործադրություն ունի որվա ընթացքում: Բայց այս չի նշանակում, թե յերաժեսուրյունը պետք է պատահաբար գործադրվի և ուղեկցի կյանքի այս կամ այն մոմենտներ:

ըին: Ցանկալի յի ժամանակ հատկացնել յերաժեսուրյուն աշխատանքները կազմակերպված կատարելու համար: Լավ է այս նպատակի համար ոգտագործել հետևիսորյա ժամերը, յերբ շոգերն անցնում են:

Սկզբում, յերբ նոր է հրապարակը կազմակերպվում, նման սխտեմատիկ աշխատանքի կարելիք չի գգացվի. յերաժեսուրյունն ու ռիթմիկան այդ շրջանում կարող են գործադրվել եպիգոդիկ կերպով: Այստեղ ժամանակի մեծ մասը հատկացնում են ազատ խաղերին. բայց աստիճանաբար կարգի բերելով աշխատանքները, կարելի յի կազմակերպել և սխտեմի վերածել յերաժեսուրյուն զբաղմունքները, սկսելով որական 10—15 բուլետով, իսկ մեծերի մոտ հասցնելով մինչև կես ժամ: Սրա մեջն են մտնում նաև կազմակերպված խաղերն առանց յերգի:

Բացի կազմակերպված աշխատանքից, լավ կլինի յերաժեսուրյունը կապել նաև այլ մոմենտներին հետ, որինակ՝ զբոսանքի (յերբ եքսկուրսիա յեն կատարում), տնտեսական թեթև աշխատանքի, հանգստի ժամերի հետ և այլն: Իհարկե պետք է ընտրել մոմենտին համապատասխան յերգեր, որինակ՝ աշխատանքի ժամանակ—աշխույժ և դինամիկ, հանգստի ժամին, հանգարտ յերգեր: Հանգստի ժամին կարելի յի տալ նաև հանգիստ խաղ, ինչպես որինակ՝ «յերաժեսուրյունը վորոշելը»: Այս խաղը կազմակերպվում է հետևյալ ձևով. ղեկավարը դուրս է գնում սենյակից, յերեխաները պայմանավորվում են, թե ինչ գործողություն է կատարելու ղեկավարը, յերբ վերադառնա. որինակ՝ մոտենա խաղընկերներից վորևէ մեկին, գտնի թագրած իրը, կամ պատից իջեցնի մի նկար: Պայմանավորվելուց հետո սկսում են յերգել. ներս է մտնում ղեկավարը: Յերբ նա մոտենում է նպատակին, յերգն ուժեղացնում են, իսկ հեռանալու դեպքում—մեղմացնում: Ղեկավարը հետևելով այս նշաններին՝ պետք է հայտնաբերի ընկերների վորոշումը:

7. Կազմակերպող մոմենտներ

Յերաժեսուրյուն վորջ մատերիալը մանկական հրապարակում մեծ մասամբ կազմված է մանկական կյանքի հետ: Հրապարակի կազմակերպման նախնական մոմենտը, ինչպես և աշխատանքային մի շարք մոմենտներ, արտահայտվում են յերգի միջոցով: Թե բնության յերևույթները, թե յերեխային շրջապատող կենդանական աշխարհը, խաղերը կապվում են յերաժեսուրյուն, յերգի և ռիթմիկ շարժումների հետ:

Բացի սրանից, յերաժեսուրյուն ձևավորվում են նաև հասարակական տոները, պաշտպանության որը, բերքի տոնը և այլն:

Այս ամենը կատարվում է փոքրիկ ինսցենիբովկաների միջոցով, վորտեղ ոգտագործվում են անցած մշակված նյութերը, համաձայնեցնելով այն սովյալ հանգեսի պահանջներին: Որինակ—բերքի տոնի համար կարելի յի ոգտագործել գյուղատնտեսական աշխատանքների հետ կապված, կամ նրանց վերաբերյալ յերգերը («Տրակտորը», «Բերքի տոնը»). կազմակերպել խաղեր և տոնը վերջացնել կլոր պարով:

8. Յեզդափակում

Այսպիսով, յերգը կապելով մանկավարժական աշխատանքների հետ, ղեկավարը յերաժշտության միջոցով մեծ ոժանդակություն է ստանում: Նրա համար յերգը ծառայում է իբրև ուժեղ հմոցիոնալ միջոց, վորի ոգնությամբ բարձրացնում է յերեխաների տրամագրությունը, ոժանդակում է յերեխաների ֆիզիկական դաստիարակությանը և վերջապես յերգն ոգնում է նրան ձևավորելու մի շարք մանկավարժական կարևոր մոմենտներ, ինչպես— աշխատանքի նախապատրաստելը, բնությունից ստացած տպավորությունները, տոնակատարությունները և այլն:

II. ՔԱՅԼԵՐԹ ՁԵՎԵՐՈՎ

Ամառը, յերբ յերեխաները ընդհանրապես շատ շարժումներ են կատարում, ձևերով քայլերին ինքնուրույն նշանակութուն հունի: Նա կազմում է կամ կազմակերպված խաղի մի մասը, կամ կազմակերպված պարապմունքի վերջաբանը և կամ թե առավոտյան լիցքի մի մասը, յերբ կարիք է լինում բոլորին հավաքել: Տալիս ենք մի քանի հասարակ քայլերի որինակներ:

1. Ուղղանկյուն գիծ—կազմվում է հրապարակի ծայրերին կամ շրջանի մեջ:

2. Միաշարից զուգաշար կազմելը:

3. Յերկու սուլներ կողք-կողքի անցնում են հրապարակի մեջտեղով (զույգեր) և ապա բաժանվելով անցնում են տարբեր կողմեր (նկ. 1):



նկ. 1.



նկ. 2.

4. Մեկ սյուն անցնում է հրապարակի մեջտեղով, բաժանվում է ու գնում տարբեր ուղղությամբ. մի մասը գնում է աջ, մյուսը՝ ձախ: Իրար կրկին հանդիպելիս կազմում են կամ առաջվա միաշար սյունը, կամ զուգաշար սյուն (զույգերով): Մրա բարդ ձևը կլինի այն, վոր իրարից բաժանվում են զույգերով (մի զույգը աջ, մյուսը՝ ձախ) և կրկին հանդիպելիս կազմում են քառաշար (նկ. 2):

5. Ոձաձև (նկ. 3):

6. Յերկու խմբակ են, մեկը շարժվում է ոձաձև, մյուսը՝ շրջանաձև. ազդանշան տալիս փոխվում են:


1. Շրջան

1. Շրջան են կազմում, աջից ու ձախից իրար ձեռք բռնում. այսպես կազմվում է նաև մի քանի շրջան՝ մեկը մյուսի մեջ և քառանձին:

2. Մեծ շրջան՝ իրար ձեռք բռնած: Իրարից բաժանվելով՝ կազմում են

մի շարք փոքրիկ շրջաններ. կրկին միանալով՝ կազմում են մեծ շրջան:

3. Շրջանում կանգնում են նաև զույգերով, մեկը մյուսի հետև I և II համարներ—դեմքերը դարձրած դեպի կենտրոն:




նկ. 3.

ա. Մրա պարզ վարիանտը. շրջանի հետևի շարքում կանգնած II համարները կատարում են մի ամբողջ պրտույտ շրջանի շուրջը, դեպի աջ: Հասնելով իր զույգին՝ կանգնում է նրա առաջ: Մրանից հետո վազում են մյուսները, վորոնք այժմ կազմում են յերկրորդ շարք: Հետո նույնը կատարվում է դեպի ձախ:

բ. Բարդ վարիանտ. շրջանի ներսի անդամները բոլորը միասին վազում են

դեպի աջ, նրանք վազում են ոձաձև, բոլորելով շրջանում կանգնած II-րդ համարներին՝ մեկին ներսից, մյուսին դրսից: Հասնելով իր զույգին, կանգնում է նրա առաջ նախկին դիրքով: Մրանից հետո վազում են շրջանի դրսի անդամները նույն յեղանակով (նկ. 4):

4. Շրջանի շուռ տալը (թարս շրջել) լավ է կատարել հանդարտ և դանդաղ քայլով: Շրջանը շուռ տալիս պետք է ունենալ մեկ, կամ մի քանի առաջընթացներ: Յանկալի չե, վոր առաջընթացը միշտ միևնույն յերեխան չլինի: Իրա համար ել դեկավարը կամ սկզբից է նշանակում, կամ թե յերեխաները հերթով ընտրում են առաջընթացներ:



նկ. 4.

Տալիս ենք յերկու վարիանտ.


ա. Իրար ձեռք բռնած, շրջանում բոլորը շարժվում են դեպի աջ. նշանակված առաջընթացը բաց է թողնում իր աջ ձեռքը, շրջում է յետ—դեպի աջ կողմը, իր հետ տանելով շրթան հակառակ ուղղությամբ և վերջը միանում է նախկին հարևանի հետ: Ստացվում է շուռ տված շրջան, այս դեպքում դեմքերը դարձրած են դեպի դուրս: Մի նոր առաջընթաց, առաջինին հակառակ ընթացքով, շրջանը դարձնում է իր նախկին դիրքին (հետադարձ դեպի ձախ կողմը. նկ. 5.):

բ. Ամբողջ շրջանը հաշվում են ըստ կարգի՝ մեկ, յերկու, յերեք, չորս (կարելի չե նաև հինգ և վեց), համարների: Ձայն են տալիս՝ առաջին համար. բոլոր առաջին համարները բաց են թողնում իրենց աջ ձեռքը, վորով ամբողջ շրջանը բաժանվում է փոքրիկ շրթանների, յտերաքանչյուրի մեջ 4—5 հոգի (նայած հաշվարկին): Առաջին համարներն իրենց շրթանները դարձնում են հակառակ ուղղությամբ և կրկին միանում իրար հետ: Հակառակ ընթացք կատարելու համար կարելի չե նշանակել այլ համար (նկ. 6):


2. ԴՈՆԱԿՆԵՐ

Կանգնում են զույգ-զույգ. պետք է հետևել, վոր առաջին և վերջին զույգի մեջ վորոշ տարածություն լինի:

Ղեկավարի ազդանշանով բոլոր զույգերը բարձրացնում են միմիանցից բռնած ձեռքերը, կազմելով դռնակներ, իսկ առաջին զույգը վազում է դռնակների տակով և կանգնում վերջում:



Նկ. 5.



Նկ. 6.

Կարելի չե վազքն սկսել նաև վերջին զույգից. այդ դեպքում նա կանգնում է ամենից առաջ:

Տալիս ենք յերկու վարիանտ.

ա. Զույգերը կանգնած չեն, այլ շարժվում են: Ազդանշանն առնելով, բոլորը բարձրացնում են ձեռքերը՝ չդադարեցնելով շարժման ընթացքը, իսկ առաջին զույգը վազում է շարժվող զույգերի դռնակների տակով և կանգնում վերջում ու շարունակում ընթացքը:

բ. Զույգերը շարժվում են՝ յերեսներն իրար դարձրած, ու կազմում յերկու շարք: Շարքերն իրարից հեռանում են 3—4 քայլ:

Շարքի ծայրին կանգնողներից յերկու հոգի բռնում են իրար ձեռք, և համաձայն ազդանշանի կամ յերաժշտական ֆրազի սկսվածքի, կողքի (БОКОВОЙ) վոստյուններով անցնում են ամբողջ միջանցքը և կանգնում մյուս ծայրին:


III. ՎԱԶՔ

Տեղափոխությունը, կամ տեղերի հերթով փոփոխությունը, կարող է տեղի ունենալ շրջանում, յերկու շարքերի մեջ, փոքրիկ խմբակներում և յնույակներում:


Տեղից-տեղ փախչելը տեղի չե ունենում կամ վորոշ կարգով (հերթով շարքերի մեջ), կամ իրար կանչելով (համար, գույն) և կամ թե յերաժշտական պայմանական ազդանշանով:

1. Տեղափոխությունն շարքերով

ա. Յերկու շարք կանգնում են իրար դեմ: Յերաժշտական առաջին ֆրազի հետ տեղափոխվում են յերկու շարքերի ծայրի անդամները. յերկրորդ ֆրազի հետ տեղափոխվում են նրանց հարևանները, և այլն: Յեթե մասնակցողների թիվը շատ մեծ է, միաժամանակ տեղափոխվում են շարքի յերկու ծայրերից: Յերբ բոլորը փոխանակվում են տեղերով, կարելի չե տալ միաժամանակ վազք բոլորի համար, վորպեսզի գրավեն իրենց նախկին տեղերը (Նկ. 7):



Նկ. 7.



Նկ. 8.

բ. Յերկրորդ վարիանտը նույնորինակ տեղափոխանակությունն է, միայն զույգերով: Իրար հանդիպելիս մի շարքի զույգերը բարձրացնում են ձեռքերը, կազմում են դռնակներ, իսկ մյուսներն անցնում են այդ դռնակների տակով:

2. Տեղափոխությունն զույգերով

գ. Առաջին շարքի առաջին զույգը վազելով մոտենում է յերկրորդ շարքի առաջին զույգին, բարձրացնում են ձեռքերը ու կազմում դռնիկ: Յերկրորդ շարքի առաջին զույգը անցնում է դռնակի տակով, վազելով մոտենում է առաջին շարքի յերկրորդ զույգին, ձեռքերը բարձրացնելով կազմում է դռնակ ու նրան անցկացնում տակով: Սա էլ իր հերթին վազում է յերկրորդ շարքի յերկրորդ զույգի մոտ և այլն:

Ստացվում է զիզզազներով շարժում (Նկ. 8):

Կարելի չե վազքով մոտենալ վոչ ըստ հերթի, այլ ըստ ցանկություն:

դ. Տեղափոխություն շրջանի մեջ: Ամբողջ շրջանը (յեթե նա մեծ չէ) բաժանվում է յերկու մասի և հաշվի յենթարկվում: Յեթե նա մեծ է, բաժանվում է յերեք կամ չորս մասի, որինակ՝ յեթե մասնակցում են 16 հոգի— հաշվում են ութական համար յուրաքանչյուր կեսում. յեթե մասնակցում

են 30 հոգի՝ 10-ական համար շրջանի ամեն մի լերրորդ մասում: Վորևե համար կանչելիս, որինակ՝ չորրորդը— շրջանը կանգնում է, և բոլոր համարները վազում են դեպի աջ՝ գրավելու հետևյալ չորրորդ համարի տեղը: Կարելի չէ վազել նաև հակառակ ուղղութիամբ: Շրջանը շարունակում է իր շարժումը: Համարների փոխարեն մասնակցողները կարող են տարբերվել գույներով:

3. Տեղափոխությունը խմբակներում

Բոլորը բաժանվում են խմբակների, յուրաքանչյուրում չորս մարդ: Ե. Խմբակներում անդամները բաժանվում են չորս համարի, կամ տարբերվում են գույներով (կանաչ, կարմիր և այլն. կարող են թևերին ունենալ կապած ժապավեններ, կամ ձեռքին դրոշակներ): Կանչվող համարը (որինակ՝ չորրորդը) կամ գույնը (կապույտը) վազում է հետևյալ խմբակը:

4. Տեղափոխությունը յեռյակներում

Շրջանում կանգնած են 3—3 հոգի շարքերով: Յեռյակի յուրաքանչյուր անդամի համար կա հատուկ յերաժշտական ազդանշան. որինակ դրսի անդամների համար՝ «Տրակտոր», միջին անդամների համար՝ «Բրիգադիր», ներսի անդամների համար՝ «Հոկտեմբեր»:

Շրջանի ներսում կանգնած է ղեկավարը մենակ, կամ փոքրիկ խումբ յերեխաների հետ: Նայած թե նրանք վոր յերգն են յերգում, դրա համաձայն էլ շարժվում են յեռյակի դրսի, միջին կամ ներսի անդամները: Յեռյակում կանգնածները ձայնակցում են յերգին: Վազքի տարածությունը կախված է շրջանի մեծությունից: Վազում են կամ ամբողջ շրջանի շուրջը մինչև իր տեղը հասնելը, կամ վորոշ թվով յեռյակներ, կամ յեթե տարածությունը մեծ է, մինչև հետևյալ յեռյակը: Շարժումը կանգ է առնում նվազի դադարի հետ, կամ առանձին ազդանշանով:

Լավ է այս խաղն անցկացնել վոր թե յերգով, այլ նվագով:

Կարելի չէ վազքն անսպասելի դադարեցնել՝ «տեղում» բացականչելով: Այս կանչից հետո բոլորը պետք է կանգնեն յեռյակներով իրենց նախկին տեղերում: Այն յեռյակը, վորը առաջինն է գրավում իր տեղը, խաղը տանում է:

IV. ԽԱՂԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Փոքր հասակում յերեխաներն աշխատանքի կենդանի ձևերի մեծ պահանջ են զգում: Սրան համաձայն կլինի ամեն մի ղեկավար, վոր գործ է ունեցել յերեխաների հետ: Լուկ զրույցներով և ընթերցանութիամբ գծվար է բավարարել յերեխաներին. նրանց հարկավոր են թե ուրախ, աշխույժ խաղեր և թե յերգեր ու պարեր:

Յերեխաներին գրավելու, աշխատանքով հետաքրքրելու, նրանց կազմակերպելու և դիսցիպլինայի յենթարկելու լավագույն միջոցը մանկական խաղերն են:

Խաղն իբրև սոցիալական գործունեություն մի ձև, իբրև դաստիարակչական և կազմակերպչական միջոց, յերեխաների խմբակային աշխատանքները շարքում ամենամեծ և ամենաեղանակյալ տեղն է գրավում: Դրա համար էլ յուրաքանչյուր ղեկավար ամենից առաջ պետք է լավ ծանոթանա մանկական խաղերին:

Մարքսիստական մանկավարժությունը խաղն ընդունում է վորպես սոցիալ—կենսաբանական անհրաժեշտություն ունեցող մի ֆակտոր, վորովհետև խաղի միջոցով յերեխան ձեռք է բերում համապատասխան ունակություններ և ուղղություն իր սոցիալական վարքի համար: Ըստ մարքսիստական մանկավարժության—խաղը լուկ կենսաբանական ֆակտոր չի հանդիսանում. վոր միայն ֆիզիկական զարգացման անհրաժեշտություն մղումն է կամ հետևանքը, այլ նա գերազանցորեն պայմանավորված է սոցիալական ստիմուլներով ու անհրաժեշտությամբ: Որինակ՝ պարզ է, վոր գույնի վերականգնումը, նրա սոցիալական փոխհարաբերությունների կերպարանափոխությունը, կապված կոլլեկտիվի մասնակցության ու դասակարգային պայքարի սրման հետ, առաջ է բերում և կրերի նոր խաղեր: Այդ խաղերի միջոցով յերեխան նախապատրաստվում է իբրև կոլլեկտիվի անդամ: Քանի վոր յերեխան խաղի միջոցով պատրաստվում է ապագա սոցիալական գործունեության համար, նա չի կարող խաղի բովանդակությունը վերցնել արատրակտ կերպով, այլ ընդհակառակը, պետք է վերցնի իր սոցիալական միջավայրից: Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը կապիտալիստական կալվածատիրական իրավակարգը այնպիսի խաղեր է տվել, վորտեղ հանդես են գալիս թագավորներ, բեգեր, խաներ, ազաներ, սատանաներ, կախարհներ, յերևան հանելով սոցիալական փոխհարաբերությունները և գաղափարական դրվածքը: Նման խաղերը միանգամայն անընդունելի չեն պրոլետարիատի աճող սերնդի համար, վորպես խորթ դաստիարակչական նշանակություն ունեցող խաղեր:

Մինչդեռ խորհրդային դպրոցը խաղերի բովանդակությունը վերացնում է այժմյան շրջապատից՝ յերակետ ընդունելով պրոլետարական դաստիարակչության նպատակները և պատրաստելով ու ամրացնելով սոցիալական գործունեություն համար անհրաժեշտ ունակություններն ու հմտությունները: Ուստի և մանկավարժը, կամ խաղի ղեկավարը, ճշտգրիտ կերպով հաշվի պետք է առնի յուրաքանչյուր խաղի ելությունը, սոցիալ—կենսաբանական արժեքը, վորն արտահայտվելու չէ խաղի նպատակադրումը՝ աշխատանք նախապատրաստությամբ, սոցիալիստական շինարարության հաղորդակից ու մասնակից անելով, շրջապատի ու կյանքի (ընտանիք, հասարակական կյանքի) յերևույթների ուսուցանող և պատկերացումով, սեռերի նորմալ և կոմունիստական փոխհարաբերությամբ: Սրանով է պայմանավորվում խաղի դաստիարակչական դերն ու նրա խոշոր արժեքը:

Մանկական խաղերի մեծ մասը կապված է վազքի, թռիչքի, ճարպիկ շարժումների և պայքարի վարժությունների հետ: Այս ամենը ֆիզիկապես ամրապնդելով չերեխաներին՝ նպաստում է նրանց շարժումների արագության, պարզության և ճշտության, մարմնի զանազան որգանների գործունեությունների ընթացքում շարժողություն մեջ է գրավում նրա բոլոր մկանները թուփազանցում թթվածնով հագեցած արյան հոսանքը, մեծացնում կրծքի վանդակի ծավալը, զարգացնում թոքերն ու շնչառությունը, կարգի բերում նյարդային սիստեմը և ուժեղացնում ակտիվությունը:

Մանկավարժը պետք է լավ հիշի, վոր չերեխան միայն չերեխա չե և վոր նրա գործողությունները, վոր հաճախ մեզ համար «տարրերնակ» ու անհասկանալի լին, իրենց հիմքում շատ խորն են ու նպատակահարմար:

Ինուս մտուրային շրջանում չերեխան թուղթ պատռելով, կարելի չե ասել, ծանոթանում է ֆիզիկայի և չերկրաչափություն տարրական չերեխություններին, նա նկատում է, վոր մարմինները բաժանվելու ժամանակ ցույց են տալիս դիմադրություն, վոր այդ մարմինները բաց թողնելու ժամանակ վայր են ընկնում, վոր մեկը մյուսի հետևից ստացվում են բազմաթիվ տարբեր ձևեր, վոր բաժանման հետևանքով մեծը փոքրանում է և այլն:

Այս բոլորը կարելի չե վերագրել նաև չերեխայի նախադարձական շրջանին, չերը այդ տարիքին հատուկ խաղերի միջոցով (աթոռի, սանդուխքների ու նստարանների վրա բարձրանալը, նրանց վրայից թռչելը, վազքը, կախիլն ու մի շարք նմանողական խաղեր՝ մենակ, չերկուսով, կոլեկտիվորեն) չերեխան ձեռք է բերում մի շարք դրական պսիխոֆիզիկական հատկություններ: Վազելով, ցատկելով մեկ այս, մեկ այն վոտքի վրա, շարժելով գնդակը, կամ մի այլ առարկա, նա սովորում է շարժումներ անել, ըմբռնում է նրանց ութմը, կոորդինացիան, որեցոր միշտ ավելի ու ավելի կատարելագործելով:

Սաղալով իր հասակակիցների հետ, չերեխան գործնականում հասկանում է կոլեկտիվ կյանքի անհրաժեշտությունը: Այստեղից բխում են ու զարգանում նրա մեջ սոցիալական ընդգնեքը՝ ընկերականություն, համերաշխություն, ազնվություն, արդարացի վերաբերմունք դեպի իր ընկերներն ու իր անձնավորությունը: Կատարելով խաղերի նույնիսկ պրիմիտիվ կանոնները, նա իրեն համար աննկատելի կերպով դառնում է կարգապահ, նրա մեջ զարգանում է որինակություն զգացմունքը:

Գործելով հողուտ իր խմբակի շահերի, չերեխան սովորում է իր բնազդներին նպատակահարմար ուղղություն տալ, ձեռք բերելով միաժամանակ ձեռներեցություն ու վճռականություն: Հաղթահարելով վախը, ցավը, բարկությունը, վիրավորանքը, հրապույրը, վորոնք միշտ էլ կարող են լինել խաղի ժամանակ, չերեխան ձեռք է բերում կամքի դաստիարակություն:

Այս տեսակետից գնահատելի չե մանկական խաղի արժեքը, վորովհետև չերեխան կատարելագործվում է անմիջապես իր անձնական փորձով սոցիալական միջավայրում:

Չերեխան փոքր հասակում ունի շատ ազատ, դեռևս աշխատանքի համար չգործադրված եներգիտ: Յեվ այս հասկանալի չե. նա դեռևս չի զբաղվել իր գոյությունը ապահովելու սիստեմատիկ աշխատանքով, նա իր եներգիտան ծախսում է լուկ խաղերի, կռիվների վրա: Բոլորին հայտնի չե, թե վորքան անախորժություններ են պատճառում չերեխաների այդպիսի խաղերը. չերեխն փշրում են պատուհանների ապակիները, չերեխն թակում հարեվանի չերեխաներին, կամ թե քաշում իրար մազերը: Բայց առանձին դժվարություն չե ներկայացնի, չեթե չերեխայի այդ սզատ եներգիտյին տայինք ոգտավետ ուղղություն, թեքեյինք դեպի մանկական ուրախ ու շարժուն խաղերը:

Թե վորքան դյուրին է այս ուղղությունը հասնել հաջող հետևանքների, մանկական խաղերի հմուտ կազմակերպող Յե. Մինսկին հետևյալ դեպքն է պատմում իր անձնական փորձից: «Անցնելով փողոցով, չես հանդիպեցի 9—10 տարեկան չերկու չերեխայի, վորոնք իրար քաշքշելով՝ ծեծվում եյին: Անցորդներից մեկն ուղեց նրանց բաժանել, բայց այդ նրան չհաջողվեց: Յես մտտեցա, բռնեցի չերեխաների ուսերից և ձայն տվի. — Ա՛յ դուք խորոզներ... հավեր: Միթե՞ այդպես են կռվում իսկական աքաղաղները: Նայե չես ձեզ ցույց տամ իսկական «աքլորակուլը»: Ձեռքերս ծախելով կըրծելի՛ս՝ կանգնեցի մեկ վոտքի վրա և ցույց տվի «աքլորակուլ» հայտնի մանկական խաղը: Պետք է տեսնել, ի՞նչ վոգեկորությունը այդ չերեխաները մի քանի րոպե «աքլորակուլ» եյին տալիս: Յերեխաները մոռացան կռվի շարժառիթը և բաժանվեցին իբրև բարեկամներ»:

Մրա նման բազմաթիվ խաղեր կան, վորոնցից պետք է չեզրակացնել, վոր խաղը չերեխաների կուտակված եներգիտան ոգտագործում է նպատակահարմար վարժություններով և նրանց չետ պահում կռիվներից ու անկարգություններից:

Սաղերը չերեխաների մեջ զարգացնում են մի շարք ոգտակար և գնահատելի հատկություններ: Սաղերի միջոցով չերեխաները վարժվում են կարգապահության չե կազմակերպվածությամբ, առանց վորի խմբակների մեջ անհնարին է կատարել վորեև կազմակերպված աշխատանք: Սաղն այս տեսակետից դեկավարի ձեռքին մի դաստիարակչական միջոց է. հարկավոր է միայն խմանալ դրանից ոգտվելու ձեռք:

Բերենք մի քանի որինակ. չերեխաները չեն խմանում շարվել, անցնում է 10—15 րոպե, մինչև նրանք կազմում են ըստ հասակի մի շարք: Ձրույցն ու համոզելը նպատակին չեն ծառայում. հարկավոր է ոգտագործել վորեև իրական միջոց, և դեկավարը դիմում է խաղի ոգնություն:

Յերեխաները շարքում կանգնալով չերեխաներին, չերեխաները շատ խիստ որենք»: Յերգի ընթացքում դեկավարը չերեխաներին սուրում է: Յերգն ընդհատվում է, չերեխաները ցրվում են հրանարակի զանազան կողմերը: Մի չերկու րոպեից հետո դեկավարը սուրում է չերկուրդ անգամ: Յերեխաներն աշխատում են արագ գրավել չերեխաները շարքում: Ով վերջին տեղը

11-2610594



ըննեց շարքում — լենթարկվում և տուժի: Վոչ վոք չի ցանկանում լինել «վերջինը», դրա համար ել շարվում են շատ արագ:

Այսպիսով յերեխաները ձեռք բերելով արագ շարվելու փորձառութուն, ապագայում նրանք այդ փորձառութունը կգործադրեն, յերբ դրա կարիքը դպացվի:

Մի այլ որինակ.

Յերեխաներն աղմկում են. ղեկավարը կարգի չե հրավիրում — չի ոգնում: Յերեխաները վորևե բանի առթիվ հուզվել են, չեն հանգստանում: Ղեկավարը դիմում է խաղի ոգնության: Յերեխաներից մեկը կապած աչքերով կանգնում է շրջանի մեջ. նա «արթուն պահակն է»: Խաղընկերները պետք է անցնեն նրա մոտով միանգամայն աննկատելի, վորպեսզի պահակը նրանց չձանաչի. ամենաչնչին շուկը, կամ շորի շարժումը, կարող է նրանց մատնել: Սենյակում տիրում է բացարձակ լուռութուն:

Կարելի չե թվել ևս մի շարք որինակներ, վորոնք ցույց կտան խաղի բարերար ազդեցութունը յերեխաների կարգապահության և կազմակերպվածության վրա: Սակայն ավելին նկարագրելու կարիք չկա, քանի վոր վերոհիշյալ որինակները կարող են բավարարել ղեկավարներին աշխատանքի ընթացքում վորպես մեթոդ:

Խաղերն ըստ իրենց բնույթի տարբեր են լինում: Խաղերի մի մասը յերեխաներին զարգացնում է մի ուղղությամբ, մի ուրիշ մասն՝ այլ ուղղությամբ:

Կան մի շարք խաղեր, վորոնք զարգացնում են յերեխայի հիշողությունը («Ի՞նչն է փոխվել այստեղ»), ուշադրությունը («Ուշադիրները»), աչքաչափը («Ամբողջի պաշտպանությունը»), ճեստողությունը («Անուշազիբ ողակը») «Նշան փնտրելը», լսողությունը («Արթուն պահակը»), իմացակամությունը («Լոտո-հանելուկ») տկուրությունը և այլն:

Մեծ ազդեցութուն ունի խաղը նաև յերեխաների կոլեկտիվիստական և սոցիալական զգացմունքների զարգացման վրա:

Խաղը հանդիսանում է մանկան հասարակայնության վարժեցման առաջին դպրոցը: Խաղերի ժամանակ հնազանդվելով վորոշ որինքների, յերեխաները վարժվում են ուղղել իրենց սխալները, սահմանափակել իրենց եզոյիստական գրգռմանը հոգուս կոլեկտիվի շահերի: Շատ խաղեր յերեխաներին սովորեցնում են իրենց ուժերը միացնել ընդհանուր նպատակի համար և գործնականում դաստիարակվում են կոլեկտիվ գործողության և համագործակցության շնորհիվ: Վերցնենք թեկուզ «Ձկնորսն ու ձկները» խաղը: Մա մի կոլեկտիվ խաղ է, վորը կազմակերպվում է հենց խաղի պրոցեսում: Այս խաղի մեջ պարզ արտահայտվում են համագործակցության և շարժումների համաձայնեցման մոմենտները: Յեթե յերեխաները գործեյին ազատ, ամեն մեկն ըստ իր հայեցողության, այն ժամանակ նրանք յերբեք համեմատական արդյունքի չեյին հասնի ձուկ վորսալու մեջ:

Շատ խաղեր, քառյակներ ու յերգեր անջնջելի հետքեր են թողնում մանուկների գիտակցության վրա և վորոշ չափով ընթացք տալիս նրանց

վարքին: Այս տեսակետից առանձնապես դնահատելի չեն քաղաքական կյանքի հետ կապ ունեցող՝ դրամատիկացիայի լենթարկված խաղերը: Բավական չե իմանալ խաղերի կարևորությունը, պետք է իմանալ նաև թե ինչպիսի խաղեր են պետք ավելալ հասակի յերեխաների համար և ինչպես պետք է այդ խաղերն ոգտագործել:

1. Ղեկավարի դերը

Յերեխաների հետ խաղերի նորմալ պարապմունքները պետք է տարվեն հետևյալ պլանով: Սկզբում ցանկալի չե կազմակերպել շուրջպարեր, վորոնք իմի չեն հավաքում յերեխաներին և դուրս բերում նրանց իներադրութունից (այստեղ ամենից հարմարը կլինեն հետևյալ խաղերը — «Գրավել տեղերը», «Կատակչին» և այլն): Այնուհետև խաղի շարժական տեմպը և ուժգնության աստիճանը պետք է ավելացնել («Ձկնորսն ու ձկները», «Անտուն նապաստակը», «Ծնատաֆետա») և վերջում անցկացնել հանդարտ խաղեր («Արթուն պահակը», «Պարանիկ») կամ թե խաղեր յերգերով, վորպեսզի յերեխաները հնարավորություն ունենան հանգստանալու:

Պրակտիկայում հաճախ է պատահում, վոր

ա. կամ ղեկավարն է դնում թույլ դիմադրության դժով — յերեխաներին տարով միմիայն իրենց ցանկացած խաղերը.

բ. կամ թե միանգամայն հաշվի չեն առնում յերեխաների ցանկությունը և մեխանիկորեն անցկացնում ըստ պլանի նշված խաղերը:

Թե մեկ և թե մյուս մոտեցումը նպատակահարմար չե: Ղեկավարի հմտությունը, նրա ճարտարությունը հենց այն է, վոր խաղեր կազմակերպելիս նկատի առնի պայմանները և խաղերը հարմարեցնի յերեխաների տրամադրությունների հետ:

Յերեխաների տրամադրությունը միանգամից շատ դժվար է ըմբռնել: Յերեխաների տրամադրությունը կախված է միանգամայն պատահական հանգամանքներից: Այնուամենայնիվ, չնայած այս բոլորին, կարելի չե տալ մի շարք ցուցմունքներ, վորոնցով պետք է ղեկավարվել այս կամ այն խաղի ընտրելիս:

1. Հանդիստ նստելուց և յերկարատև զրուցից հետո, յերբ յերեխաները հողնածություն են զգում թե մտավոր — յերկար լսելու, և թե ֆիզիկական — յերկար նստելու հետևանքով (նշանները՝ անհանգիստ շարժումներ աթոռի վրա, հորանջում, կարգապահության խախտում), պետք է կանգ առնել այնպիսի խաղերի վրա, վորտեղ կարող են մասնակցություն ունենալ միանգամից բոլոր յերեխաները, և վորտեղ պահանջվում են վազք ու թռիչքներ, մի խոսքով՝ այնպիսի խաղեր, վորոնք պահանջում են շարժական գործողությունների մեծ լարվածություն («Գիշերն ու ցերեկը», «Կարթը» և այլն):

2. Այն դեպքում, յերբ յերեխաները հոգնել են յերկարատև զրոսանքի, չողալու, կամ թե դեմոնստրացիաներին մասնակցելու հետևանքով — պետք է

կանգ առնել անպիսի խաղերի վրա, վորոնք չեն պահանջում ֆիզիկական ուժեղ լարվածութիւն և միաժամանակ ծիծաղ, ուրախութիւն են պատ-
ճառում (ս. 101-ում հանդիմանելը), «նշան փնտրելը» և այլն), կամ թե այնպիսի
խաղեր, վորոնք պահանջում են մտքի վորոշ լարվածութիւն («Աշխարհի
հերը» և այլն):

3. Սաղերը պետք է պատկերավորել պատմվածքներով, զրուցներով:
Սաղերին կարող են առիթ ծառայել համապատասխան դեպքերը: Որի-
նակ՝ դեպի կաշարան եքսկուրսիա կատարելուց հետո խաղում են «Գնացքը»,
արտադրութիւնից վերադառնալուց հետո՝ «Արհեստանոցը» և այլն:

Սաղի հաջողութիւնը խոշոր չափով կախված է խաղը կազմակերպողի
շնորհքից, նրա՝ խաղը ցուցադրելու լեզանակից: Սաղն ամեն անգամ հետաքրք-
րութիւն չի առաջացնում: Կան դեպքեր, յերբ ղեկավարը պետք է պայման-
ներ ստեղծի և այդպիսով անցնելիք խաղը հետաքրքիր դարձնի: Այս դեպքում
շատ բան է կախված ղեկավարի հնարագիտութիւնից և ընդունակութիւնից:
Ահա որինակ.

- Վերջացնելով վորևէ աշխատանք, ղեկավարը հանկարծ հայտարարում է.
— Հապա, յերեսաներ, հինգ հաշված՝ աթոռները դասավորել պատերի տակ
և շրջան բռնել: Մեկ, յերկու, յերեք, չորս, հինգ: Ուղղել շրջանը. հանգիստ:
— Յերեսաներ, դուք յերբևիցե տակառ տեսել եք:
— Տեսել ենք:
— Իսկ դուք գիտե՞ք՝ ո՞վ է շինում տակառը:
— Գիտենք, տակառագործը:
— Ճիշտ է: Բայց ասացե՞ք՝ տակառագործը ինչի՞ց է տակառ պատրաս-
տում:

- Տախտակներից:
— Ճիշտ է, յերեսաներ: Ո՞վ կարող է ասել, յեթե տակառի տախտակ-
ներից մեկը հանենք, տեղն ի՞նչ կմնա:
— Դատարկ տեղ:
— Ճիշտ է միանգամայն: Այժմ լսեցեք յերեսաներ. նոր խաղը կոչ-
վում է «Տակառագործ», կամ «Դատարկ տեղ»:

Այնուհետև ղեկավարը համառոտ բացատրում է խաղի բովանդակու-
թիւնը և անմիջապէս սկսում խաղը: Նախապատրաստական նման աշխա-
տանքներից հետո, խաղն անցնում է ուրախ և հիմերաշխ:

Շատ բան, ինչպէս տեսնում եք, կախված է խաղը շնորհքով բացա-
տրելուց, պատկերավոր պատմելուց:

Սաղի բացատրութիւնը պետք է լինի կարճ (յերեսաները շատ ան-
համբեր են), հետևողական, կենդանի և պատկերավոր: Սաղը պետք է պատ-
մել ձևերով, միմիկայով, խաղերով—մի խոսքով՝ ղեկավարը պետք է ամեն
միջոցի դիմի պատմվածքը հետաքրքիր դարձնելու համար: Այն դեպքում,
յերբ միմիկայն խոսքերով դժվար է բացատրել, ղեկավարը դիմում է փոր-
ձված մի խումբ յերեսաների ոգնութիւն և նրանց միջոցով ցուցադրում
խաղը:

Կան մի շարք կանոններ, վորոնցով պետք է ղեկավարվի ղեկավարը
խաղեր անցնելիս:

1. Սաղեր անցնելիս ղեկավարը պետք է նկատի առնի հեշտից—զրժ-
վարին, պարզից—բարձին աստիճանաբար անցնելու անհրաժեշտութիւնը:
Նմանապէս պետք է հետևի ֆիզիկական վարժութիւնների աստիճանական
հերթականութեան, հավասարաչափ դարձացնելով մարմնի բոլոր մասերը:

2. Ղեկավարը պետք է հետևի, վոր խաղը յերեսաներին շատ չհոգնեցնի:
Հաճախ պատահում են դեպքեր, յերբ յերեսաներն անպիսի են տարվում
խաղով, վոր մոռանում են հանգստի կարիքը: Հոգնածութեան նշան-
ներն են՝ կարմրութիւնը, շնչասպառ լինելը: Նման դեպքերում ղեկավարը
պետք է ընդհատի խաղը, վորպէսզի հնարավորութիւն տա յերեսաներին
հանգստանալու, կամ թե փոխարինի թեթև, թուլլ ֆիզիկական լարվածու-
թիւն պահանջող խաղերով:

3. Սաղի կանոնները պետք է խստիվ պահպանվեն: Այս մոմենտն ա-
հագին դաստիարակչական նշանակութիւն ունի, ուստի և ղեկավարն այդ կա-
նոններին պետք է հետևի առանց զիջումների: Մեծ նշանակութիւն ունի նաև
հրապարակի սահմանների պահպանումը. անհրաժեշտ է հետևել, վոր յերե-
սաները խաղի ժամանակ գծված սահմաններից դուրս չգան: Այս մոմենտը
վարժեցնում է յերեսաներին զսպել իրենց ցանկութիւնները և իրենց շար-
ժումները հարմարեցնել նախորդված սահմաններին:

4. Սաղերը, նամանավանդ շարժական խաղերը, ցանկալի չէ կատարել
բաց ողնով: Յերբ կարիք զգացվի խաղերն անցնել փակ սենյակներում, այդ
դեպքում անհրաժեշտ է հետևել, վոր սենյակը հաճախ ողափոխվի և հատակը
խաղից առաջ լավ մաքրվի:

Վ. ԽԱՂԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաղեր մեծ յերեսաների համար—(5—7) տարեկան

Ա. ՇԱՐՃԱԿԱՆ ԽԱՂԵՐ

1. «Մոսոդ № 1»

Փաղացողներ 10—30 հոգի.
Փողադակին-հրապարակ.

Սաղը հետևյալն է: Յերեսաներից մեկը—մրոտողը ուզում է քսվել
խաղացող յերեսաներից վորևէ մեկին, իսկ նրանք փախչում են մրոտողից:
Յերեսաներն ընտրում են իրենց համար տնակներ. գետնի վրա շրջաններ
են գծում և դարձնում մեկ ընդհանուր «տուն», կամ մի քանի տնակներ,
վորտեղ ապաստանելու դեպքում մրոտողը նրանց չի կարող մրոտել: Մրո-
տողը տարբերվում է մնացած յերեսաներից իր թևի կապոցով կամ հատուկ
նշանով: Վորին քսվում է մրոտողը, նա խաղից դուրս է մնում:

Յերեք-չորս հոգի մրտաելուց հետո ընտրում են նոր մրտաող և խաղը սկսվում է նորից: Յուրաքանչյուր անգամ մրտաող ընտրելու դեպքում յերեխաները հաշվի չեն յենթարկվում հետևյալ հանգերգով՝

Փոքրիկներ ենք՝ ուրախ, ճարպիկ,
Մեզ ասում են հոկտեմբերիկ,
Չենք սիրում մենք շատ խոսել,
Միշտ պատրաստ ենք աշխատել:



Նկ. 9.

Ղեկավարն ասում է այս կամ մի այլ վոտանավոր և ամեն մի խոսք ասելիս ձեռքը հերթով դնում յերեխաների կրծքին: Ուն վրա վերջանում է վոտանավորի վերջին հանգը, նա համարվում է նոր մրտաող: Յերեք յերեխաները վարժվեն հանգահաշվին այնուհետև իրենք կհաշվեն:

Այս խաղը զարգացնում է զգուշություն, ճարպկություն և վոտքերի մկանները:

«Մրտնոյ № 2».

Խաղացողներ 10—30 հոգի.
Խաղադահլիճ-հրապարակ:

Այս խաղը կազմակերպվում է նույն յեղանակով, միայն մրտաողից ազատվելու համար վոչ թե ապավինում են տներին, այլ պաղում են: Պրազողներին չի կարելի մրտաել: Այս խաղը խաղում են մեծ յերեխաները, վորովհետև փոքրերը վազքի ընթացքում դժվարանում են անմիջապես նստել:

Այս խաղը զարգացնում է զգուշություն, ճարպկություն, վոտքերի մկանները և վորովայնային պրեսը:

3. «Սագերն ու աղվեսը»

Խաղացողներ 10—30 հոգի.
Խաղադահլիճ-հրապարակ:

Խաղը սկսելու համար հանգերգով ընտրում են աղվես ու սագարած: Հրապարակի մի ծայրին շինում են կոլխոզ (գիծ են քաշում), մյուսում՝ արոտատեղ (նույն յեղանակով): Արոտատեղից մի մետր հեռավորության վրա քաշում են մի փոքր գիծ՝ վորպես աղվեսի սահման: Նախորոք նշանակված աղվեսը կանգնում է իր սահմանում: Խաղի սկզբին սագարածը ճիպտաը ձեռքին՝ սագերին քաշում է արոտները և ինքը վերադառնում կոլխոզ: Սագերն արածում են: Վորոշ ժամանակ անցնելուց հետո սագարածը կանչում է սագերին՝ «Սագեր, սագեր»: Կսելով սագարածի ձայնը, սագերը պատասխանում են՝ «ղա, ղա, ղա»: Սագարածը հարցնում է— «ուտել կուղեք», սագերը՝ «ղա, ղա, ղա», սագարածը՝ «ղե թուեք»: Սագերը բացում են թեվերը, ձեռքերը թափահարելով թռչում են դաշտի վրայով դեպի կոլխոզ, իսկ աղվեսը հետեվից ընկած վորսում է սագերին: Բռնածններին նա տանում է իր բունը: Յերեք բռնվածների թիվը հասնում է 4—5 հոգու, ընտրում են նոր աղվես ու սագարած:

Խաղի սկզբնական շրջանում ցանկալի չէ, վոր ղեկավարը լինի աղվեսի գերում:

Այս խաղը զարգացնում է զգուշություն, ճարպկություն և վոտքերի մկանները:

4. «Տրակտորներն յեկան»

Խաղացողներ 10—30 հոգի.
Խաղադահլիճ-հրապարակ:

Յերեխաները կազմում են շրջան, ձեռքերը կոնքին կանթած, նմանեցնելով պատուհանին: Յերեխաներից մեկը ման է գալիս շրջանի շուրջը և ասում՝ «Կոլխոզով մեկ չես կանցնեմ, պատուհանից կնայեմ, ամեն մեկի մոտ գալով՝ ուրախ նոր լուր կհայտնեմ»:

Կամ թե՛

Կոլխոզի շուրջը կանցնեմ,
փոքրիկներին կրկանչեմ,
բոլորին հետս առած՝
տրակտորի մոտ կտանեմ:

ԿՈՆԽՈԶ
ՍԱՊԱԳԵՐՆ
ԱՂՎԵՍ

Նկ. 10.

«Կհայտնեմ» կամ «կտանեմ» բառերից հետո, շուրջը պատույ չերեխան խփում ե վորեւ մեկի ուսին: Վերջինը հարցնում ե՝ «ո՞վ ե»: պատույն ասում ե իր ազգանունը—Կարլեն Վարդանյան, խփվողը, «Բնչ ես ուզում»: «Յեկ շուտ վազենք, նոր տրակտորներ տեսնենք»:

Յերկուսն ել կանգնում են՝ մեջքներն իրար դարձրած: Յերեխաները խմբովին արտասանում են՝ «Վազեք, տրակտորներ տեսեք,

Մեկ, չերկու, չերեք»:

«Յերեք» բառն արտասանելուց հետո չերկուսն ել վազում են դեպի խաղադաշտի ծայրին կանգնած պալմանական տրակտորը (գիծ, սահման), ապա վերադառնում են: Նրանցից չուրաքանչյուրն աշխատում ե շուտ հասնել և գրավել շրջանում ազատված տեղը:

Ով առաջինն ե հասնում ու գրավում բաց տեղը, չերեխաները նրա հասցելին արտասանում են՝

«Կարլենն արագ տեղ հասավ,
Շատ տրակտորներ նա տեսավ»:

Մրանից հետո խաղը սկսվում ե նորից: Ով մնաց առանց տեղի, նա դառնում ե խաղ սկսողը:

Մի այլ վարիանտ.

Խաղադաշտի ծայրին քաշում են մի գիծ, վորպես «տրակտորների ճամբան»: Խաղը կրկնվում ե նույնությամբ, բայց «չեկեք վազենք, նոր տրակտորներ տեսնենք» բառերից հետո փոխանակ մեկի, բոլոր խաղացողները թողնում են շրջանը և վազում դեպի «տրակտորների ճամբան»—տրակտորներ տեսնելու: Տրակտորների ճամբան հասնելուն պես մի քանի վալուկյան ձեռները ճակատներին դրած՝ դիտում են չորս-բոլորը և կրկին վազում չես ու կազմում շրջան, ամեն մեկը գրավելով հատուկ նշան դրած տեղերը: Շրջանից դուրս մնացող չերեխան համարվում ե խաղն սկսողը:

Այս խաղը զարգացնում ե ճարպկություն, մրցում, բառապաշար, պահպանում ե շարժումների համաշխարհությունը (կոորդինացիա): Այս խաղը կարելի չե անցնել նվազի տակ:

5. «Զիախաղ»


Խաղացողներ 15—40 հոգի.
Խաղադաշտ—հրապարակ.

Յերեխաները բաժանվում են չերկու խմբի. մի մասը՝ կոլխոզի աշխատավորներ, մյուսները՝ ձիեր, այն հաշվով, վոր յուրաքանչյուր աշխատավորին ընկնի մեկ կամ չերկու ձի: Լավ կլինի գործածել նաև սանձեր: Ձիերը շարվում են իրար հետև ծոծրակի ուղղությամբ, մեկ-մեկ, կամ զույգ զույգ: Ձիապանները մոտենում, լծում են իրենց ձիերը: Յերե զեկավարն ազդանշան ե տալիս (ծափ, կամ բառերով՝ «լծեցեք»), բոլոր կանգնածներն ասում են՝ «Բարձրանում են կռները

Ու բացվում են դռները»:

Վերջին բառից հետո կոլխոզի չերկու դռնապանները, վորոնք կանգնած են առաջ, բացում են դռները (բարձրացնում են իրար բռնած ձեռքերը, կամ բարձրացնում են վորեւ ճյուղ կամ բարակ զերան, վորը ծառայում ե իրեկ կոլխոզի բակի դուռ) և բոլորն անցնելով բացված դռներով՝ շրջում են հրապարակում, սկզբում դանդաղ, ապա արագ: Մի չերկու շրջան կատարելուց հետո աշխատավորները ձիերին բաց են թողնում արածելու, իսկ իրենք քաշվում են մի կողմ ու վորեւ չերգ չերգում: Յերգը վերջացնելուց հետ, կոլխոզիկների հետ դաշտ դուրս չեկած պահակն ասում ե.

— «Ընկերներ, անցեք, ձիերը ցրիվ չեկան»: Կոլխոզիկները վազում են և ամեն մեկն աշխատում ե բռնել իր ձին:



Նկ 11.

Բռնած ձիերը տանում, հանձնում են պահակին, և այդ ձիերն այլևս իրավունք չունեն պահակի մոտից փախչելու: Յեր կոլխոզիկները բռնում բերում են բոլոր ձիերը, այնուհետև նախկին ձեռով վերադառնում են կոլխոզ:

Այս խաղը զարգացնում ե վտաքերի և ձեռքերի մկանները և հարստացնում բառապաշարը:

6. «Գրավիլ սեղերը»

Խաղացողներ 10—30 հոգի.
Խաղադաշտ, դահլիճ, հրապարակ.

Փոքրերը նստում են շրջանաձև և նշան դնում իրենց տեղերը (հատակի վրա կավիճով, հրապարակում՝ քարերով, ճյուղերով և այլն): Փոքրերից մեկը զեկավարն ե: Նա պտավում ե շրջանի շուրջը դրսից, մեջքնդմեջ ձեռքը դնում խաղացողների ուսին և ասում՝ «գրոսանքի»: Վորի ուսին ձեռք դրեց, նա վեր ե կենում և հետևում զեկավարին: Այսպիսով բոլոր չերեխաները վեր են կենում և հետևում զեկավարին, վորը չերթի ընթացքում կատարում ե զանազան շարժումներ ու ձևեր (ձեռքով շարժումներ, նստել,

վազել և այլն): Բոլորը նույնությամբ կրկնում են ղեկավարի ձևերը: Ղեկավարն անսպասելի հրաման է տալիս—«գրավել տեղերը»: Յերեխաները, վորոնց թվում նաև ղեկավարը, պատասխանում են՝ «միշտ պատրաստ ենք» և վազելով աշխատում են գրավել նշան դրած տեղերից վորևե մեկը: Այն յերեխան, վոր մնում է առանց տեղի, դառնում է ղեկավար և խաղն ըսկըսում նորից:

Խաղի օրենքներ. 1. Թույլ չի տրվում տեղ գրավել, մինչև չարտասանվի—«Միշտ պատրաստ ենք», 2. Կարելի չէ գրավել վոչ միայն իր նախկին տեղը, այլև առաջին պատահածը:

Այս խաղը կարելի չէ խաղալ՝ նաև յերեխաներին աթոռների վրա նստեցնելով, միայն աթոռների թիվը պետք է մեկով պակաս լինի խաղացողների թվից:

7. «Կատակչին»

Խաղացողներ 10—40 հոգի.
Սրահ, դաշտ, հրապարակ:

Խաղացողները շրջան են կազմում և հաշվում՝ մեկ յերկու: Յերկրորդ համարները դուրս են գալիս և կազմում յերկրորդ շրջան, առաջին համարների հետև: Խաղացողներից մեկը՝ «Կատակչին» մտնում է շրջան և կանգնում կենտրոնում: Ղեկավարի նշանով յերկրորդ շրջանը դառնում է ղեկավար, կամ ձախ, և քայլում շրջանաձև, միևնույն ժամանակ հետևում «Կատակչուն», կրկնելով այն բոլոր ձևերը, վոր կատարում է նա շրջանում ման գալիս:

Խաղացողների համար անսպասելի, ղեկավարը հանկարծ սուլում է Յերթն ընդհատվում է, և խաղացողներից յուրաքանչյուրը կանգնում է առաջին շրջանի յերեխաներից վորևե մեկի առաջ: «Կատակչին» ևս աշխատում է գրավել վորևե ազատ տեղ:

Այն յերեխան, վորը տեղ չի կարողանում գրավել, դառնում է նոր «Կատակչի», և խաղը շարունակվում է, միայն այս անգամ խաղին մասնակցում է այն շրջանը, վորն առաջ կանգնած էր տեղում: Միայն յուրաքանչյուր անգամ, յերբ նոր «Կատակչի» չէ հրապարակ գալիս, ղեկավարը հետևում է, վոր շրջանակները լայնանան, շրջանակում կանգնած յերեխաների մեջ վորոշ չափով հեռավորություն պահպանվի:

Այս խաղը զարգացնում է ճարպկություն, ինքնուրույնություն, առողջ կատակ, ուշադրություն և ֆանտազիա:

8. «Ձկներն ու ձկնորսներ»

Խաղացողներ 10—30 հոգի.
Դաշտ—հրապարակ:

Յերեխաներն ընտրում են յերկու «Ձկնորս», իսկ իրենք վազվզում են հրապարակում (լճում) ըստ ցանկություն: Ձկնորսներն իրար ձեռքից բռնած վորսում են ձկներին: Վորսած ձկները միանում են ձկնորսներին և

կազմում ձկնորսական ցանց: Ցանցը պետք է ողակաձև շրջապատի նոր վորսացող ձկներին: Ողակի մեջ ընկնող նոր ձուկը միանում է ցանցին և այսպիսով ցանցն աստիճանաբար լայնանում է: Յերբ բոլոր ձկները բռնվում են, խաղը վերջանում է:



Նկ. 12.

Խաղի օրենքներ. 1. Այն յերեխաները, վորոնք ցանց են կազմում, ձուկներին ձեռքով բռնելու իրավունք չունեն: Ձուկ բռնելու հնարավորություն ունեն միմիայն ցանցի ծայրի անդամները, վորոնք ձեռքերն ազատ են: 2. Ձկները կարող են խույս տալ ցանցից մինչև շրջապատվելը, վորից հետո իրավունք չունեն փախչելու: Յերթ ցանցը ձկներ հետապնդելիս պատուից, այդ մոմենտում բռնված ձկներն ազատ են արձակվում:

Այս խաղը, հակառակ իր հետաքրքրության, բավական հոգնեցուցիչ է ղեկավարը զգուշությամբ հետևելու չէ, վոր խաղը չափազանցություն չհասցնեն:

Այս խաղը զարգացնում է ճարպկություն, զգալ է տալիս կօրեկտիվ աշխատանքի կարևորությունը:

9. «Անտուն նապաստակը»

Խաղացողներ 10—50 հոգի.
Դաշտ—հրապարակ:

Յերեխաներն իրենց միջից ընտրում են «Վորսորդ» և «Անտուն նապաստակ»: Մնացած յերեխաներն իրար ձեռք բռնելով (լավ կլինի ողակներով) կազմում են 3—4 շրջան (թուփ), և դասավորվում են հրապարակում իրարից հեռու: Յուրաքանչյուր շրջան դարձյալ ընտրում է մեկական նապաստակ, վորը պրպզում է իր շրջանի կենտրոնում: Սկզբում ընտրված «Անտուն նապաստակը» և վորսորդը կանգնում են իրարից մեկ մետր հեռավորության վրա վազելու դիրքում:

Ղեկավարի կողմից խաղն սկսելու ազդանշանի համաձայն վորսորդը վազում է «Անտուն նապաստակի» հետևից: Նապաստակը խույս տալով, մտնում է վորևե շրջան: Հենց վոր հետապնդվող «Անտուն նապաստակը»

մտավ վորեւ շրջան, այդ շրջանի նապաստակը պետք է դուրս վազի իր շրջանից և իր համար նոր տեղ փնտրի մյուս թփերի տակ: Վորսորդը հետապնդում է այդ նոր նապաստակին:

Վազքի ընթացքում խփված կամ բռնված նապաստակն անմիջապես դառնում է «վորսորդ», իսկ նախկին «վորսորդը»՝ «Անտուն նապաստակ», և այսպիսով խաղն անհանգստացնում էր շարունակվում է:



Նկ. 13.

Վորոշ ժամանակից հետո ղեկավարի ցուցմունքով (կամ ամեն մի նապաստակ բռնելուց հետո) շրջանների մեջ են մտնում իրրև նապաստակ մյուս չերեխաները, վորոնք թուփ են ներկայացնում և այսպիսով բոլոր չերեխաները հերթականությամբ մասնակցում են խաղին:

Սաղացողները փոքրաթիվ լինելու դեպքում, թփերի փոխարեն հատակին կավձով քաշում են փոքրիկ կլոր շրջաններ: Սաղի այս վարիանտի դեպքում բոլոր խաղացողներն ակտիվ մասնակցություն են ունենում:

Այս խաղը զարգացնում է ճարպկություն, արագավազություն, ինքնապաշտպանություն:

10. «Կարք»

Սաղացողներ 10—30 հոգի:

Դասարան, սրահ, դաշտ:

Յերեխաները կազմում են շրջան, կենտրոնում գտնվում է ղեկավարը: Նա ձեռքին ունի մի թուփ, վորի ծայրին կապած է թեփով կամ բամբակով լցրած պարկ: Համաձայն նշանի, ղեկավարը պտտեցնում է թուփը (կարթը) աջակես, վոր պարկը քավելով հատակին՝ հասնի և անցնի շրջանում կանգնողների վտարների տակից: Յերեխաները խուսափելով կարթից, ցատկում են վեր, չերը կարթն անցնում է վտարների տակից: Սաղացողներին նա, վորը չկարողացավ ժամանակին թռչել և վտարներով արգելք չեղավ կարթին, դառնում է նոր ղեկավար, կամ թե դուրս է գալիս շրջանից:

Մանրություն.— Պետք է հետևել, վոր կարթը սղղա հատակի վրա, չանջատվի նրանից, ապա թե վոչ, նա կարող է փաթաթվել չերեխաների վտարներին և վայր ձգել նրանց:



Նկ. 14.

Ցուցմունք ղեկավարին. Այս խաղը հատկապես հարմար է խաղալ ձմեռը՝ չերը չերեխաները մրսում են: Սաղի ընթացքում չերեխաները տաքանում են: Պետք է հետևել, վոր խաղադաշտը քարոտ չլինի, և թուփները կատարվեն վոչ թե ամբողջ նրբանի, այլ վտարի թաթերի վրա:

11. «Գիտեր—ցերեկ»

Սաղացողներ 10—30 հոգի:


Դահլիճ, հրապարակ, դաշտ:

Սաղացողները բաժանվում են հավասար թվով չերիու խմբերի: Մի խումբը ներկայացնում է գիշեր, իսկ մյուսը՝ ցերեկ: Գիտնին քաշում են մի չերկար կենտրոնական գիծ: Կենտրոնական գծից դեպի աջ և ձախ 6—8 մետր հավասար հեռավորությամբ քաշում են նույնանման գծեր, վորպես հակառակորդ խաղացողների սահման:

Ղեկավարը չերիու խմբի խաղացողների համաձայնությամբ վորոշում է վոր խումբն է լինելու գիշեր և վորը՝ ցերեկ: Սմբերը շարժվում են կենտրոնական գծի աջ և ձախ կողմերը, չերեխաներն իրար դարձրած, կոնակները դեպի սահման:

Ղեկավարը կանգնում է կենտրոնի գծի ծայրին և նետում է դեպի վեր, մոտավորապես 12 սանտիմետր տրամագիծ ունեցող մի կլոր տախտակ ամ կարտոն, վորի մի չերեսը սև է, մյուսը՝ սպիտակ: Տախտակն ընկնելով հատակին, չեթե ցուց ավելի սև չերեսը՝ «գիշերներն» անմիջապես չեա

են դառնում և փախչում դեպի իրենց սահմանը, իսկ «ցերեկները» հետապնդում են նրանց: «Գիշերները» մինչև իրենց սահմանագիծ հասնելը վերջան ընկնելին՝ ավելանում են «ցերեկներին» թվի վրա: Յերկու կողմի խաղացողները կրկին վերադառնում են իրենց նախկին տեղերը և նորից սկսում խաղը:



Նկ. 15.

Հակառակն է կատարվում, յերբ սպիտակ գույնն է ընկնում գետին: Այսպես խաղը շարունակվում է:

Վերջում հաղթում են նրանք, վորոնք շատ թվով չերեխաներ ունեն իրենց խմբում:

12. «Խուսափել»

Խաղացողներ 10—20 հոգի.
Արահ, հրապարակ, այգի.

Յերեխաները կազմում են բավական մեծ շրջան:

Ղեկավարը կանգնում է շրջանի կենտրոնում: Շրջանում գտնվող չերեխաներն իրար գնդակ են նետում, աշխատելով դիպցնել ղեկավարին՝ ծնկներից բարձր: Ղեկավարն ամեն կերպ պաշտպանվում է: Խուսափելով



Նկ. 16.

գնդակից, նա վռստոտում է, պղպղում է, գնդակն անց է կացնում վռտքերի արանքով, դիտի վրացով և այլն: Ով գնդակը գիպցրեց ղեկավարի ծնկներից վեր վորեե տեղին, նա փոխարինում է ղեկավարին, իսկ վերջինս զբաղվում է յեկողի տեղը:

Մանորուբյուն. Յեթե խաղացողների թիվը մեծ է, շրջան են ուղարկում մի քանի հոգի:

Խաղի որեմքները. 1. Շրջանում չերեխաներից վոչ վոք իրավունք չունի տեղից շարժվելու. 2. խաղացողներից վոչ վոք չի մտնում շրջան՝ գնդակ վերցնելու: Գնդակը վերցնում է ինքը ղեկավարը և հանձնում ավելի մոտ գտնվողին: Յեթե գնդակը շրջանից դուրս է գալիս՝ այն վերցնում է ավելի մոտ գտնվող չերեխան և հարվածում ղեկավարին:

Այս խաղը զարգացնում է աչքի տեսողությունն ու նշանառումը:

13. «Նսաձեխա»

Խաղացողներ 10—40 հոգի.
Ռահլիմ, հրապարակ.

Յերեխաները կանգնում են դուռըրով: Ղեկավարի հրամանով դուռըրը հեռանում են իրարից և կազմում ներքին միջանցք: Յուրաքանչյուր շարքի առաջին համարը ստանում է մի դրոշ:

Ղեկավարի նշանով, նրանք վազում են իրենց շարքի չերկարությամբ, դրսի կողմից, դեպի չետ և վերադառնում միջանցքով ու կանգնում իրենց տեղը՝ դրոշակը տալով իր հետեը կանգնած հերթական համարին: Խաղը նույն ձևով շարունակվում է, մինչև վոր վերջին համարը ստանալով դրոշակը՝ շտապում է ղեկավարի մոտ:



Նկ. 17.

Այն շարքը, վոր առաջինը հանձնեց դրոշակը ղեկավարին, տանում է խաղը:

Յուցմունքներ ղեկավարին. Անհրաժեշտ է հետևել, վոր խաղի ժամանակ չերեխաները կանոնավոր և լրիվ իրենց շարքի շուրջ բոլորը վազելուց հետո դրոշակը հանձնեն իրենց հետեը կանգնած հերթական համարին:

Յեթե խաղացողների թիվը մեծ է, շարքերը կարճ են, հարկավոր է չերեխաներին շարքերում կանգնեցնել իրարից մեկ կամ յերկու քայլ հեռավորության վրա:

Վորպեսզի խաղացողները խաղի ընթացքում չխառնվեն իրար և շարքի ուղղութիւնը չփչացնեն, ցանկալի չէ, վոր յուրաքանչյուր խաղացող իր կանգնած տեղը նախապէս նշան անի:

Այս խաղը զարգացնում է ճարպկութիւնը, արագավազութիւնը և մրցում:

Բ. ՆՎԱԶ ՇՈՐՓ-ՍԿԱՆ ԽԱՂԵՐ

1. «Արթուն պահակը»

Խաղացողներ 10—20 հոգի:
Դասարան, Կրպարակ:

Յերեխաները կազմում են շրջան: Նրանց մի մասը կանգնած է, մյուսը՝ նստած, բայց լուռ: Խաղընկերներից մեկը «Արթուն պահակն է»:

Նրա աչքերը կապում են և կանգնեցնում շրջանի կենտրոնում: Յերեխաներից մեկը պետք է անցնի շրջանի միջով, պահակի մոտով, լուռ, անձայն, այնպէս, վոր պահակը նրա անցնելը չզգա: Յեթե յերեխայի անցնելու ժամանակ պահակն զգաց նրա վտտքի ձայնը, կանչում է՝ «կանգնիր» և ձեռքով ցույց է տալիս ուղղութիւնը: Անցնող յերեխան պետք է անմիջապէս կանգնի: Յեթե պահակի ձեռքի ուղղութիւնը ճիշտ է, այն ժամանակ ղեկավարը թույլ է տալիս բացել պահակի աչքերը, վորից հետո նա տեղափոխվում է շրջան, իսկ բռնված յերեխան դառնում է «Արթուն պահակ»: Յեթե ցույց տված ուղղութիւնը սխալ է, ղեկավարն ասում է՝ «ճիշտ չէ», և խաղը շարունակվում է, մինչև վոր պահակը կրօնի անցնողներից վորևէ մեկին:



Նկ. 18.

Կարելի չէ խաղալ և այսպէս:

Յերը «Արթուն պահակն» ասում է՝ «կանգնիր», անցնող յերեխան պետք է անմիջապէս կանգնի: Այս դեպքում «Արթուն պահակը» ձեռքը

մեկնում է անցնող յերեխայի կողմը. վերջինս բռնում է «Արթուն պահակի» ձեռքը և դանազան ձայներ հանում (կատվի, շան, թռչնի և այլն): Յեթե «Արթուն պահակը» կարողացավ այդ ձայներից գուշակել յերեխայի ով լինելը, այդ դեպքում նրանք փոխանակվում են ղեռերով:

Յուցմունքներ ղեկավարին. Պետք է հետևել, վոր յերեխաների աչքերը կապող թաշկինակը լինի մաքուր՝ խուսափելու համար վարակիչ հիվանդութիւններից:

Այս խաղը զարգացնում է լսողութիւնը, զգայնութիւնը, զգուշութիւնը:

2. «Խփոցիկ»

Խաղացողներ 10—20 հոգի:
Դասարան, Կրպարակ:

Յերեխաները կանգնում են շրջանաձև և յերկու ձեռքով բռնում պարանից, վորոնց ծայրերը միացած են և լայնութիւնով հավասար են շրջանի չափին: Ղեկավարը գտնվում է շրջանի կենտրոնում: Նա աշխատում է խփել շրջանում կանգնածներից վորևէ մեկի ձեռքին: Յերեխան շտապ լետ է քաշում ձեռքերը, աշխատելով խուսափել հարվածից: Նա, վորի ձեռքը հաքված ստացավ, փոխարինում է ղեկավարին, և խաղը շարունակվում է:



Նկ. 19.

Յերը յերեխաները վարժվեն այս խաղին, կարելի չէ մտցնել հետևյալ բարդութիւնը: Պարանի մեջ անց կեն կացնում վորևէ կրոր փոքրիկ ող: Խաղն սկսելիս յերեխաներն այդ ողը սլացնում են պարանի վրա ձեռքի ձեռք. կենտրոնում կանգնողն աշխատում է գտնել, թե ում ձեռքի տակ է ողը: Նա մտտենում է խաղացողներին և ասում՝ «քեզ մտտ է ողը», ում վոր հարց տվեց, նա անմիջապէս վերցնում է յերկու ձեռքը պարանից: Յեթե ողը նրա մոտ է, տեղերը փոխում են, յեթե վոր, խաղն առանց ընդհատվելու շարունակվում է:

3. «ՆՇԱՆ ՎՈՒՆԵՐԻՆ»

Խաղացողներ 5-30 հոգի.
Դասարան, պիւմբ, միջակցի.

Հոկտեմբերիկները մի ողակ դուրս ե գալիս սենյակից: Ողակավարն աչքի ընկնող մի տեղ, կախում ե մի նշան (որինակ՝ պիոներական նշան): Պետք ե աշխատել նշանը կախել այնպիսի մի տեղ, վոր նա իր գույնով չտարբերվի շրջապատող ֆոնից: Վորքան հաշույ լինի ֆոնի ընտրությունը, այնքան աշխույժ կանցնի խաղը: Նշանը չպետք ե թագցնել: Մի քիչ հետո ներս ե գալիս ողակը ե վնտրում նշանը: Ողակի անդամներից վորեկ մեկը յեթե նկատում ե նշանը, յերեք իր ընկերներին չի հայտնում, այլ քաշվում ե մի կողմը, նստում: Կարող են ուրիշներն ել նստել ուրիշ նշան սեանելով, կամ նկատելով, վոր իրենց ընկերները նստել են, ինքն ել միանում ե նրանց հետ: Այս գեպում ողակավարը մոտենում ե, հարց ե տալիս, թե վնրն ե վորոշված նշանը. ով վոր ճիշտ տասց, նա յել փոխարինում ե ողակավարին, իսկ ողակավարը միանում ե մյուս խաղացողներին:

Հաճախ ե պատահում, վոր յերեխաները միքանի անգամ անցնում են նշանի մոտով ե չեն նկատում:

Այս խաղը զարգացնում ե անողությունը, համբերությունը, ուշադրությունը:

4. «ԻՆՅՆ Ե ԱՅՍԵՂ ՎՈՒՎԵԼ»

Խաղացողներ 5-40 հոգի.
Դասարան, պիւմբ, դահլիճ.

Սեղանի վրա շարում են մի շարք իրեր: Խաղացողները մի բուսելի չափ զիտում են իրերը, աշխատելով հիշել նրանց դասավորությունը: Սրա-



Նկ. 20.

նից հետո կապում են խաղացողներից մեկի աչքերը: Իրերից վորեկ մեկը պահում են, կամ փոխում նրա դասավորությունը: Նա, վորի աչքերը կա-

պել ելին, նայելով սեղանին, պետք ե ասի բացակա առարկայի անունը, կամ թե անդամութիւնը առարկան դնի իր նախկին տեղը, նախկին դիրքով: Մի այլ վարիանտ.

Յերը բոլոր խաղացողները սահմանված ժամանակամիջոցում զիտեցին դասավորված իրերը, ղեկավարը կարգադրում ե հետևանալ սեղանից, կամ անցնել մյուս սենյակ: Այս գեպում նա վերցնում ե սեղանից մի կամ յերկու առարկա ե միքանիսի դիրքը փոխում: Կրկին յերեխաներին հրավիրում ե սեղանի շուրջը: Ով վոր կարողացավ կատարված փոփոխությունը լրիվ վորոշել, նա յել համարվում ե խաղը տանողը:

Այս խաղը զարգացնում ե հիշողությունը ե ուշադրությունը:

5. «ԱՆՈՒՇԱՊԻՐ ՈՂԱԽՐ»

Խաղացողներ 10-40 հոգի.
Դասարան, խաղարան.

Ղեկավարը նախորոք պատրաստում ե մի թերթ - յերկարությունն ու լայնությունը 50 սանտիմետր, վորի վրա քաշում ե վորոշ թվով դանազան գույնի շրջաններ (որինակ՝ 5 հատ կարմիր, 8 հատ դեղին, 6 հատ սև ե այլն), խառն հերթականությամբ: Թերթը կախում ե աչքի ընկնող տեղ: Յերեխաները շարվում են թերթից 5 քայլ հեռավորության վրա: Նրանց հնարավորություն ե արվում մեկ բողբոջի չափ զիտել ե վորոշել, թե յուրաքանչյուր գույնից քանի շրջան ե գծված: Գրել թուղլատրվում ե միմիայն թերթը իջեցնելուց հետո: Հաշվառումը կատարվում ե ողակներով: Հաղթող ե հանդիսանում այն ողակը, վորն ավելի մեծ թվով ճիշտ պատասխաններ կտա:

Ծանոթություն. Այս խաղում կարևոր ե, վոր թերթը յերեխաներին հավասարապես լավ յերևա: Վորպեսզի իրար չխանգարեն, լավ կլինի յերեխաներին թերթին մոտեցնել ողակներով:


Այս խաղը զարգացնում ե հաշվի ե գույների ըմբռնման ունակությունը:

6. «ՄՈՒ ԽԱՆԳՑՆԵԼ»

Խաղացողներ 5-30 հոգի.
Տուն, դասարան, խաղարան.

Տան անկյունում սեղանի կամ աղյուսի վրա դնում են վառած մոմ: Յերեխաներից մեկի աչքերը կապում են ե կանգնեցնում սեղանի մոտ, մեջքը դեպի մոմը: Նա պետք ե սեղանից հեռանա յերեք քայլ, վորից հետո յերկու անգամ պտտվի իր շուրջը, ապա յերեք քայլ հաշվելով, մոտենա դեպի սեղանը, վոր փչելով հանգցնի մոմը:

Կարելի չե խաղալ ողակներով և հաշվել, թե վոր ողակը հաղթանակեց՝ շատ մոմ հանդիսներով:



Նկ. 21.

Այս խաղը զարգացնում է տարածական կողմնորոշումը:

7. «Ուժադիրները»

Նազադոյներ 5-30 հոգի.
Դասարան, սեմյակ, հրապարակ:

Յերեխաները կանգնում կամ նստում են շրջանաձև: Ղեկավարը գըտընվում է շրջանի կենտրոնում կամ մի այլ տեղ, վորտեղից նա պարզ յերեվում է բոլորին: Նա հայտնում է խաղացողներին, վոր ինքը մի շարք նախադասութուններ է ասելու: Յեթե այդ նախադասութունները ճիշտ լինեն, բոլոր խաղացողները պետք է բարձրացնեն իրենց աջ ձեռքը: Իսկ սխալ լինելու դեպքում ձեռքերը չեն բարձրացնում: Որինակ. ղեկավարն ասում է՝ «սեղանը շինված է փայտից» — յերեխաները բարձրացնում են ձեռքերը, «տրակատորը շինված է յերկաթից» — բարձրացնում են ձեռքերը. «գըրքերը պատրաստում են խնձորից» — ձեռքերը չեն բարձրացնում, և այլն: Պետք է աշխատել շատացնել ծիծաղ առաջ բերելու մոմենտները: Սխալվողներին կարելի չե տեղի վրա տուլժի յենթարկել խաղացողների համաձայնութեամբ, նրանց տալով պարելու, յերգելու, արտասանելու, զանազան ձայներ հանելու դաստիարակչական տուլժեր: Սույն ձևը ավելի ուրախացնում և աշխուժացնում է խաղը:

Այս խաղը զարգացնում է ուշադրութունը և զսպողական կենտրոնները:

8. «Ո՞վ է քեզ կանչողը»

Նազադոյներ 10-40 հոգի.
Հրապարակ, դահլիճ:

Հրապարակի մեջտեղը քաշում են շրջագլիճ: Կենտրոնում կանգնեցնում են աչքերը փակ մի յերեխայի, մյուսները գտնվում են շրջագլից դուրս: Յերը ղեկավարն ասում է՝

«Մեկ, յերկու, յերեք,
դե շրջան շտապեք», —
յերեխաները վազում են շրջան և ասում՝

Մենք մի փոքր հանգստացանք,
դարձյալ մեր տեղերն անցանք,
լսիր — ո՞ւմ ձայնն է հնչում,
ասան — քեզ ո՞վ է կանչում:

Սրանից հետո ղեկավարը մատով նշտն է անում յերեխաներից վորեւ մեկին: Վերջինս պետք է աչքերը փակ յերեխայի անունը տա: Սա յել պետք է լմանա, թե ո՞վ է իրեն կանչում: Յեթե աչքերը փակ յերեխան ձանաչեց իրեն կանչողին, այն ժամանակ նրանք փոխանակվում են իրենց դերերով, և խաղը սկսվում է նորից:

Առաջնորդող յերեխան կարող է կամ աչքերը փակել, կամ թե թաղի-նակով աչքերը կապել: Միևնույն թաղիկնակով չի կարելի տարբեր յերեխաների աչքերը կապել, վորպեսզի հիվանդութեան դեպքում իրար չվարակեն:

Այս խաղը զարգացնում է լսողութունը, հիշողութունը և ձայնի տեմբրըն ըմբռնելու կարողութունը:

9. ԽԱՂԵՐ ՅԵՐԳԵՐՈՎ

1. «Մկան քակարդ» (Մկնորս)

Նազադոյներ 10-30 հոգի.
Դասարան, դահլիճ:

Յերեխաները բաժանվում են յերկու հավասար մասի: Մի խումբը կաղմում է շրջան — թակարդ, մյուսը՝ մնում է շրջանից դուրս — մկներ:

Այն խումբը, վոր կաղմել է շրջան, ձեռք-ձեռքի տված քայլում է շրջանահանում՝ արտասանելով հետևյալ հանգերգը:

«Ա՛խ, ի՞նչ շատ են ես մկները,
Ա՛խ, ի՞նչպես են մեզ փաստում.
Ա՛մեն տեղ են, ամեն քնչում,
Հա՛ ուտում են, հա՛ կըծում:

Դե զգուշացեք, անպիտաններ,
Ձեզ համար ել կպարսպենք,
Հրես թակարդը կլարենք
Ու ձեր հոտը կկտրենք»:

Արագ

Յերածու. Միք. Միրզայանի.

Մկան թակարդ

Ախ ինչ շար են ևս մրկ-նն ըր. ախ ինչ պես են մեզ վնա-սում
ա. մին տեղ են ա-մեն քրն-ջում հա, ու-տում են հա. կրր-ծում

Յերբ յերգը կամ արտասանությունը վերջանում է, շրջանը կանգ է առնում, յերեխաները բարձրացնում են ձեռքերը: Մկաները վազվզում են թակարդի (շրջանի) միջով: Յերբ դեկավարը բացահանչում է «փակ», բոլորը ձեռքներն իջեցնում են, թակարդը փակվում է: Ով մնաց շրջանում, նա համարվում է բռնված: Բռնվածները խաղին չեն մասնակցում: Սաղը վերջանում է այն ժամանակ, յերբ մկաների մեծամասնությունը բռնվում է:

Այս խաղը զարգացնում է արագաշարժություն, ճարպկություն, լսողություն:

2. «Դե հասի»

Խաղացողներ 10—30 հոգի.

Դահլիճ, հրապարակ.

Յերեխաները զույգերով կանգնում են իրար հետև: Մեկը կանգնում է



Նկ. 22.

բոլորից առաջ, անզուգ. նա խաղ սկսողն է: Բոլորը միասին արտասանում են՝ (կամ յերգում)

Փոքրիկ հոկաեմբերիկներ ենք,
Թռչկոտեղով միշտ վազվզում ենք.
Ով կարող է մեզ հասնի՝
Թող մեր հետևից ընկնի»:

Փոխադր. Միք. Միրզայան

Փոքրիկ հոկաեմբերիկներ

Փոք-րիկ հոկ-տեմ ֆե - լիկ - ներ-ենք, թռչ-կո-տա-լով միշտ վազ-վզ-ում ենք
Ընկ ու-տում են մեզ հաս- նի փող մեր հե- տն - մի - մա - զը:

Յերգը վերջանալուց հետո վերջին զույգը բաց է թողնում ձեռքերը և վազում հակառակ ուղղությամբ—մեկը աջ, մյուսը՝ ձախ, աշխատելով իրար ձեռքը բռնել շարքի առաջ գտնվող տարածության վրա: Սաղ սկսողը հետապնդում է նրանց և աշխատում է իսկի մինչև նրանց միանալը: Հաջողվելու դեպքում, ում վոր խփեց, նրա ընկերոջը վերցնում է իրեն զույգ և գալիս կանգնում շարքի առաջ, իսկ խփվողը դառնում է խաղ սկսող: Յեթե չհաջողվեց վորեկ մեկին խփել, վազողները գալիս, կանգնում են շարքի առաջ, իսկ ինքը կրկին մնում է խաղ սկսողի դերում:

Այս խաղը զարգացնում է արագաշարժություն, ճարպկություն:

3. «Շոգեկառք» (տես համանուն յերգը)

Խաղացողներ 15—40 հոգի.

Դահլիճ, խաղարան.

Յերեխաները բաժանվում են յերկու խմբի: Մի խումբը—կոլխոզնիկներն են, մյուսը՝ գնացքը և նրա վարողները: Կոլխոզնիկների դերը կատարող յերեխաները հավաքվում են դահլիճի կամ խաղարանի մի անկյունում, նախորոք նշանակված տեղը (կայարան) և յերգում են «Շոգեկառք» յերգի առաջին տունը մինչև «վագոնները վազում են իրար հետ մոտ քառասուն»:

Գնացք ներկայացնող խումբը շարվում է իրար հետև ծոծրակի ուղղությամբ, յուրաքանչյուրը բռնելով իր առաջ կանգնողի թևից: Յերգի սկզբում գնացքն սկսում է գանդաղ շարժվել և մոտենալ կայարանին: Շատ լավ կլինի, յեթե յերեխաները ձայները իմիտացիայով նմանեցնեն յին շարժվող գնացքի ձայնին և ձեռքերն ել շարժեյին վրացների (ռիչազ) ձևով:

Յերկրորդ տան սկզբին («Շոգեկառք, շոգեկառք, ասա՛ ի՞նչ բերիր») գնացքը կանգ է առնում կայարանի մոտ:

Կոլխոզնիկներին և գնացք վարողներին մեջ տեղի յե ունենում հարց ու

պատասխան—յերգով: Հետագա բոլոր տներում առաջին տողը յերգում են կայարանում հավաքված կոլխոզնիկները, իսկ յերկրորդ տողը — գնացք վարողները:

Յերբ յերգը վերջանում է, բոլոր կոլխոզնիկները բեռնում են գնացքը, իրենք ել նստում և մեկնում կոլխոզ շուկա:



Նկ. 23.

Գնացքը մեկնելիս տալիս է ազդանշաններ, վորոշ տեղեր կանգ է առնում և կատարում այն ամենը, ինչ վոր պատահում ենք սովորական «Յերկաթուղի» խաղի ժամանակ:

Այս խաղը գաղափար է տալիս կոլտնտեսութեան և կոլխոզ շուկայի մասին, նպաստում է ուրիշմիկ շարժումներին:

Գ. ՆՄԱՆՈՂԱԿԱՆ (Իմիտացիոն) ԽՄՂԵՐ

1. «Հայելի»

Խաղացողներ 10—30 հոգի.
Դասարան, սրահ, հրապարակ.

Յերեխաները ձեռքերը բռնած շրջան են կազմում: Նրանցից մեկը գտնվում է շրջանի կենտրոնում: Շրջանը պտտվելով արտասանում է.

Մենք իրարից անբաժան՝
Կազմել ենք ուրախ շրջան.
Մեզ վոչ վոչք չի խանգարում,
Յերբ խաղում ենք ու յերգում:

Այս խոսքերից հետո յերեխաներն այլևս չեն շրջում, պզզում են ու ասում.

«Ասա, Սաթիկ, (Սրմիկ, Եմմիկ և այլն)
Ի՞նչ անենք մենք
Մեկ, յերկու յերեք»:

«Յերեք» խոսքից հետո բոլորը բարձրանում են, իսկ այն յերեխան, վորը գտնվում էր շրջանի մեջ, կատարում է վորևէ շարժում կամ գործողություն, որինակ՝ ծափ է տալիս, բախում է վորտքերով, կամ աշխատանքային շարժում կատարում:

Բոլորը կրկնում են նրա շարժումները: Սրանից հետո շրջանի յերեխան ընտրում է իրեն փոխարինող, իսկ ինքը դրավում է իրեն փոխարինողի տեղը, և խաղը շարունակվում է:

Այս խաղը դարձաօգնում է ուշադրություն, դիտողություն:

2. «Ավագ վարպետ»

Խաղացողներ 5—30 հոգի
Դասարան, խաղարան, պարտեզ.

Յերեխաներից մեկին ընտրում են վարպետ, վորը քաշվում է մի կողմը: Մնացած յերեխաները պայմանավորվում են ղեկավարի հետ, թե ինչ ցույց տան վարպետին: Պայմանավորվելուց հետո նրանք մոտենում են վարպետին ու ասում.

— «Բարև, վարպետ». վարպետը պատասխանում է «բարև, յերեխաներ, ո՞ւր ելիք գնացել»: Յերեխաները պատասխանում են՝ «անտառ» կամ մի այլ տեղ: Վարպետը հարցնում է՝ «իսկ ինչ ելիք անում դուք այնտեղ»: Յերեխաները շարժումներով ցույց են տալիս, թե ինչ են արել. որինակ՝ ցանել են, հնձել են, կախել են, փայտ են կտրել և այլն: Վարպետն աշխատում է հասկանալ: Յեթե նա ճիշտ վորոշեց և հասկացավ յերեխաներին, դարձյալ մնում է վարպետի գերում, իսկ յեթե սխալվեց, ընտրում են մի նոր վարպետ, և խաղը շարունակվում է:

3. «Արհեստանոց»

Խաղացողներ 10—30 հոգի,
Դասարան, խաղարան, հրապարակ.

Խաղացողները նստում են յերկար սեղանի շուրջը և ձեռքերը դնում սեղանի յեզրին, ափերով ցած: Ղեկավարը կանգնում է սեղանի ծալրին, աչքի ընկնող տեղ: Նա յուրաքանչյուր յերեխային հանձնարարում է աշխատանքի մի վորոշ պրոցես (սղոցել, ունդել, մուրճով խփել և այլն), վորը նա պետք է կատարի համապատասխան շարժումներով ու ձայնային եֆեկտներով: Յեթե խաղացողները թիվը մեծ է, միևնույն աշխատանքը կարելի չէ հանձնարարել մի քանի հոգու: Տված ազդանշանով սկսվում է աշխատանքը: Բոլոր յերեխաները մատերով արագ և ուրիշմիկ զարկում են սեղանի յեզրին: Ղեկավարը նույնն է անում, ինչ վոր յերեխաները: Հանկարծ նա ձեռքնուցում է աշխատանքի վորևէ պրոցես: Խաղացողներից նրանք, վորոնց հանձնա-

րարված է նման աշխատանք, պետք է անմիջապես ղեկավարի հետ միասին կատարեն աշխատանքի այդ ձևը: Մնացած յերեսաները շարունակում են մատներով սեղանին զարկել: Վորոշ ժամանակից հետո ղեկավարն անցնում է աշխատանքի մի քչլ պրոցեսի: Նրա հետ շարունակում են աշխատել արդեն ուրիշ յերեսաներ և այլն:

Խաղի վերջն անորոշ է: Խաղը վերջանում է, յերբ յերեսաները հողնում են, կամ թե ղեկավարն անցնում է մի այլ խաղի:

Յուցումներ ղեկավարին.— Խաղի հաջողութունը կախված է ղեկավարի և յերեսաների հնարագիտութունից, նրանց աշխատանքի ձևերի հաջող խմբացիակից և ձայնային եփեկաներից: Աշխատանքի պրոցեսը ներկայացնող ձայնային եփեկաններն ու շարժումները վորքան բազմազան ու շնորհալի լինեն, այնքան խաղը հետաքրքիր կանցնի:

Այս պոլիտեխնիկ խաղը զարգացնում է հնարագիտութուն, ուշադրութուն, լսողութուն, ռիթմիկ շարժումներ, ծանոթացնում է աշխատանքի պրոցեսներին:

ԽԱՂԵՐ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՁԸ

1. «Լոսո—հանելուկ»

Խաղացողներ 5—20 հոգի.
Դասարան, տուն, խաղարան.

«Լոսո—հանելուկը» սովորական լսողի մի այլ ձևն է: Փոքր քարտերի վրա գրվում է վորևե հանելուկ, իսկ մեծ քարտերի քառակուսի շրջանակներին մեջ նկարվում պատասխան նկարը: Որինակ՝ փոքր քարտի վրա գրված է «առանց ձեռքի ու մուրճի շինվել է այս խրճիթը» իսկ քառակուսի շրջանակի մեջ նկարված է «թռչնի բունը»:

Քարտերը և շրջանակների նկարները համարակալվում են՝ հեշտ ստուգելու համար:

Լսողի հանելուկները պետք է լինեն պարզ, յերեսաներին հասկանալի: Լավ կլիներ՝ հանելուկներն ու նկարները դասավորվեյին ըստ թեմաների:

Համապատասխան հանելուկներ կարելի է ընտրել Зилов-ի «Отгадайка» և «Загадки—складки» գրքուկներից: Բացի այդ, մանկական դասագրքերում և ամսագրերում հաճախ են պատահում համապատասխան հանելուկներ:

2. «Յույց սվե՛ վո՛րսեղ է ձե՛ր ֆիքք, ակամջը յե՛լ այլն».

Խաղացողներ՝ 5—30 հոգի.
Դասարան, հրապարակ.

Բոլոր յերեսաները կանգնած են շրջանում, կամ նստած են սեղանի շուրջը: Ղեկավարն առաջարկում է ցույց տալ դեմքի այն մասը, վոր ինքը կատի որինակ՝ «ցույց տվեք ականջները». բոլորը ցույց են տալիս ականջ-

ները, նրանց թվում և ղեկավարը: «Յույց տվեք քիթը, բերանը», և այլն: Յերբ յերեսաները տարվում են խաղով, ղեկավարն առաջարկում է ցույց տալ յերեսի մի վորևե մասը, որինակ՝ ականջը, իսկ ինքը ցույց է տալիս իր դունչը: յերեսաների զգալի մասը սխալվում է և կրկնում ղեկավարի շարժումը: Ով սխալ է կատարում, նա համարվում է տարված: Ինչքան քիչ լինի յերեսաների թիվը, այնքան ել քիչ թվով տարբեր շարժումներ պետք է ցույց տալ: Բավական է նաև 2—3 շարժումը:

3. «Ո՞վ է քոչում»

Խաղացողներ 10—30 հոգի.
Դասարան, խաղարան.

Այս խաղը տրվում է յերեսաներին այն նպատակով, վոր նրանք ուշադիր լինեն այն բառերի վերաբերմամբ, վոր լսում են:

Յերեսաները կազմում են շրջան, վորի կենտրոնում կանգնած է ղեկավարը: Նա տալիս է զանազան առարկաների, կենդանիների, միջատների անուններ, վորոնք թռչում են, կամ չեն թռչում: Յեթե նա տալիս է վորևե բանի անուն, վորը թռչող է, այն ժամանակ յերեսաները ձեռքերը բարձրացնում են, ասելով՝ «թռչում է», իսկ յեթե վոչ, այն ժամանակ յերեսաները ձեռքերը չեն բարձրացնում և ասում են—«վոչ»: Որինակ՝ ղեկավարն ասում է՝ «բզեզ», բոլորը, նրանց թվում և ղեկավարը, բարձրացնում են թևերը և ասում՝ «թռչում է»: Ղեկավարն ասում է՝ «կով» և բարձրացնում թևերը, բայց մյուսները ձեռքերը չպետք է բարձրացնեն: Ով ձեռքերը բարձրացրեց—համարվում է տարված:

Վերը հիշված բոլոր խաղերը 3—4 տարեկան փոքրերի համար դժվար է:

Այս խաղը զարգացնում է յերեսաների ուշադրութունը, լսողութունը, տեսողութունը և զսպողական կենտրոնները:

2. ԽԱՂԵՐ ՓՈՔՐ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. «Չխախաղ»

Խաղացողներ՝ 5—10 հոգի.
Սեյտի, դասարան, հրապարակ.

Յերեսաները կանգնում են զույգ-զույգ: Նրանցից մեկը դառնում է ձի, մյուսը՝ կառուպան, վորը կառավարում է սանձերի միջոցով (թռկ):

Յերեսաները գնում են դանդաղ կամ վազքով, ինչպես կկարգադրի ղեկավարը:

Սանձը պետք է անցկացնել յերեսայի վզով ծոծրակի կողմից, ապա յերկու թևերի տակից հետ տանել: Պետք է զգուշանալ և սանձը յերեսայի վզին չփաթաթել:

Այս խաղը զարգացնում է արագաշարժութուն:

2. «Մագետ»

Նաղացողներ, 5—10 հոգի:
Դասարան սենյակ, պարտեզ,

Մագը կազմակերպվում է նույն չեղանակով, ինչպես և մեծերի խումբակում, միայն հանվում է աղվեսը:

Ուրեմն խաղը կատարվում է առանց աղվեսի, վորը վորսում եր սագերին: Մագերն ուղղակի վազում են արոտատեղից սագալածի մոտ:

Տանողը նա յե, ով առաջինն է վաղելով հասնում սագալածին:

Այս խաղը զարգացնում է արագաշարժություն:

3. «Մուկն ու կատուն»

Նաղացողներ 10—20 հոգի:
Դաշտ, հրապարակ, խաղաբան.

Հրապարակի մի անկյունում շինում են կատվի տունը, մյուսում՝ մըկներին բնիքը (քաշում են փոքրիկ շրջաններ առանձին մկներին համար, կամ թե մի ընդհանուր բուն բոլոր մկներին համար). չերբորդ անկյունում պահեստն է: Պահեստում դարձած են քարեր, փայտի կտորներ, վորոնք ներկայացնում են՝ ալյուր, յուղ, շաքար և այլն:

Կատուն քնած է իր տանը, այդ ժամանակ մկներն իրենց բնիքից անցնում են պահեստ:

Ղեկավարի ծափի ձայնից (իբր մկները վորեւ բան շուռ տվին պահեստում) կատուն զարթնում է, վազում է մկներին հետևից: Մկները փախչում են պահեստից և աշխատում են թագնվել իրենց բնիքում: Կատուն իրավունք ունի բռնելու մկներին, մինչև նրանց բնիք մտնելը:

Կավ կլինի խաղին մասնակցի վոչ թե մեկ, այլ մի քանի կատուներ: Այս խաղը զարգացնում է ճարպկություն, զգուշություն:

3. «Փուչիկ»

Նաղացողներ 10—20 հոգի:
Դահլիճ, հրապարակ.

Յերեխաները ղեկավարի հետ, իրար ձեռք բռնած, սեղմ կանգնած են շրջանում: Շրջանը կամաց-կամաց լայնանալով, յերեխաները չերգում են՝

Դե փքվի, իմ փուչիկ,
Ել մի մնա դու պատիկ,
Փուչիկ, դու խիտ չփքվես,
Թե չես հանկարծ կարաքես:

Յերեխաները ձեռքերը բաց չեն թողնում, մինչև ղեկավարը չստի՝

«փուչիկը տրաքից»: Այն ժամանակ բոլորը ծունկ իջեցնելով, նստում են և ստում՝ «հոպ»: Իրանից հետո ղեկավարն առաջարկում է փչել նոր փուչիկ:

Միջակ

Յերածշտ. Մի. Միրզայանի

Փուչիկ

դե, փք-վի իմ փու-չիկ, ել մի մը-նա դու պես - տիկ
փու - չիկ, դու խիտ չը փք-վես, թե չես հան-կարծ կը - տրա - քես:

Բոլորը դանդաղ վեր են կենում, միաժամանակ ձեռքերը վեր բարձրացնելով խորը շնչում են և կրկին կանգնում սեղմ շրջան ու խաղը շարունակում:

Ե. ԽԱՂԵՐ ՅԵՎ ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՎՈՎ

Կավ է, չերը յերեխաները խաղի ընթացքում թոկ են գործածում: Թոկը կարելի չե ոգտագործել հետևյալ ձևով. գետնին ամրացնում են յերկու ձող, իրարից 4—5 մետր հեռավորության վրա: Զողերի վրա ամրացնում են մեխեր, իրարից բարձր, վորոշ տարածություն վրա, որինակ՝ առա-



Նկ. 24.

ջինը գետնից 5 մատնաչափ բարձրության վրա, իսկ մյուսներն իրարից 3 մատնաչափ: Թոկը մեխերից վոչ թե կապում, այլ կախ են պցում, վորպեսզի յերեխան վրայից ցատկելիս թոկը վորաքը չպահի և յերեխային վայր չգցի: Թոկի յերկու ծայրից կապում են ծանրություններ, որինակ՝ պարկով

Թեփ, կամ շորի կտորից կազմած մի գնդակ, վորպեսզի թոկն իր միջին մասում չթուլանա, կախ չընկնի:

1. Յերեխաները հերթով թռչում են թոկի վրայից, վոր սկզբում փռած է գեանի վրա, հետո կախում են ամենափոքր բարձրության վրա, ահուհետև աստիճանաբար բարձրացնելով՝ հասցնում են մինչև $\frac{3}{4}$ արշին բարձրության: Ընկնելու ժամանակ, վորպեսզի յերեխաները չփռասվեն, անհրաժեշտ է թռչելի տեղը ծածկել թեփով կամ ավազով:

2. Թոկը կապում են յերեխայի կրծքին հավասար բարձրության վրա և վրան ամրացնում զանգ: Յերեխաները թոկի տակից անցնելիս կամ վազելիս պետք է կռանան, վորպեսզի զանգին չգիպչեն: Յեթե թոկն աստիճանաբար իջեցնենք, յերեխային կղնենք այնպիսի դրության մեջ, վոր նա ստիպված կլինի վոչ միայն կռանալ, այլ նույնիսկ սողա թոկի տակից: Յերեխաները սովորութուն ունեն մեջքը թեքելու, իսկ կռանալը և սողալը շատ է ոգնում մեջքի ուղղվելուն և ամրապնդվելուն:



Նկ. 25.

3. Կարելի չէ թոկը կապել մի փոքր ավելի բարձր, այնքան, վոր յերեխան ձեռքը բարձրացնելիս չհասնի զանգին: Այն ժամանակ յերեխան ստիպված է ցատկել, վորպեսզի հասնի զանգին, վորը կախված է



Նկ. 26.

թոկից: Այս նմանապես ողտակար վարժություն է մեջքն ուղղելու համար:

4. Յերկու յերեխա դանդաղ պտտեցնում են յերկար թոկը, իսկ մյուսները վազքով անցնում են պտտվող թոկի տակից:

5. Յերեխան կարող է մենակ վազել և թռչել՝ պտտեցնելով կարճ թոկ: Թոկը պետք է ունենա այնպիսի յերկարություն, վոր յերբ յերեխան կանգնի, նրա յերկու ծայրերը հասնեն յերեխայի գոտկատեղին:

6. Թոկով կարուսեղ. Յերեխաները կանգնում են շրջանաձև, ճախ կամ ալ ձեռքով բռնելով թոկը, վորի յերկու ծայրերը միացած են: Յերեխայի



Նկ. 27.

աղաա ձեռքին կարելի չէ տալ դրոշակ: Յերեխաները քայլում են և արտասանում՝

Դանդաղ շարժվում են վտտքերը,
պտտվում է կարուսեղը,
կամաց-կամաց մեր քայլերը
ուժ են առնում ու վազում:

Կարուսեղը սկզբում պտտվում է դանդաղ, հետո արագ: Յերեխաները վորոշ ժամանակ վազում են առանց արտասանության: Հետո յերբ դանդաղեցնում են վազքը, ասում են՝

«Կամաց-կամաց, ել մի շտապեք,
կարուսեղը կանգնեցրենք»:

Կարուսեղի ընթացքն աստիճանաբար դանդաղեցնելով, վերջին խոսքերի հետ կանգ է առնում: Լավ է կարուսեղ խաղալիս յերեխաներին բաժանել յերկու մասի, մի մասը պտտվում է, իսկ մյուսը — դեկավարի հետ արտասանում է ու ծափ տալիս:

Յերբ յերեխաները սովորեն թոկը բռնած վարժ պտտել, կարելի չէ սովորեցնել նաև վազքով հետ շարժվել: Այս դեպքում դեկավարն ու խաղին չմասնակցող յերեխաներին ասում են. «վազքով ա-բագ, վազքով ա-բագ, վազքով ա-բագ դե յետ դարձ», իսկ պտտվողները վազում են, թոկը բռնած մեկ ձեռքով և արտասանած ամեն մի



Նկ. 28.

վանկի դիմաց կատարում են մեկ քայլ: «Յետ դարձ» խոսքերի հետ նրանք յետ են դառնում, թողը բռնում մյուս ձեռքով և վազքը շարունակում հակառակ ուղղությամբ: «Կամաց-կամաց» բառերի հետ կարուսելն աստիճանաբար դանդաղեցնում է իր ընթացքը և կանգնում:

Դրանից հետո հանգստացող յերեխաներն են կարուսել բռնում և խաղը շարունակում:

Ե. «ՆԵՏՈՒՄ»

Յերեխաների համար շատ կարևոր է, վոր փոքր հասակից զարգանա նրանց աչքաչափը, ձկունությունն ու ճիշտ նշանառությունը, վորովհետև այս ունակությունները նրանց շատ են պետք գալու:

Մրա համար շատ ոգտակար է, վոր յերեխաները հենց փոքր հասակից սովորեն փայտեր, գնդակներ, ողակներ նետել—սկզբում ղեկավարի ցույց տված ուղղությամբ, իսկ հետո ղեպի վորոշակի նպատակներ: Դրա համար գետնին դնում են մի մեծ արկղ, կամ թե քաշում են մեծ շրջան, ղեպի ուր յերեխաները նետում են իրենց քարերն ու գնդակները: Հետագայում նշանառություն կետը կարելի է բարձրացնել ծառի վրա, բայց յերեխայի հասակից վոչ բարձր: Յերեխաները շատ են սիրում նետել ղեպի կախ ընկած անիվը, նամանավանդ, յեթե նրան միացած է գանգ: Յերեխաներից նա յե հաղթող հանդիսանում, վորն ավելի շատ անգամ է հասնում նպատակին: Վերջապես կարելի է կազմակերպել հետևյալ խաղը: Գնդակը (կարելի է շինել փայտի կտորներից) նետել վորոշ հեռավորություն վրա պատրաստված փոսերի մեջ, կամ թողից կախ ընկած անիվի միջով:

VI. ՏՈՆԵՐԸ ՆԱԽԱԳՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Թե ձմեռվա աշխատանքը մանկապարտեզում և թե ամառը հրապարակում—մեծ հնարավորություններ են տալիս կազմակերպելու հետաքրքիր տոներ և զվարճություններ*): Այդ տոներն ունեն սոցիալական—դաստիարակչական մեծ նշանակություն. նրանք համախմբում են յերեխաներին, կազմակերպում նրանց, ընտելացնում կոլեկտիվ ստեղծագործության, յերեվան հանում յերեխաների ձեռնհրեցությունը (инициатива) և լայնացնում նրանց մտահայացքը:

Բացի դաստիարակչական նշանակությունից, տոներն ունեն և լայն ազդեցություն նշանակություն: Նրանց միջոցով բնակչության մեջ մասսայականացվում են նոր դաստիարակչության ձևերը և կոմբաստիարակչության խնդիրները: Հեղափոխական տոները մասնակից են դարձնում յերեխաներին սոցիալական կյանքին և Խորհրդային Միության շինարարությունը:

*) Մանկական տոները, ներգրավելով մանկական փոքր կոլեկտիվը, ծնողներին, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և այլն, տարեկան չորս անգամից ավելի պետք է շինեն (յոթամսյակում մեկ անգամ):

Համախմբվելով տոնի նախապատրաստական աշխատանքների շուրջը, յերեխաները ցուցաբերում են իրենց ակտիվությունը:

Հասարակական տոները, հակադրելով կրոնական տոներին, լավագույն միջոցն է նրանց դեմ պայքարելու համար:

Տոների նպատակն է—տալ յերեխաներին վառ, հուզական ապրումներ: Տոները պետք է թարմացնեն յերեխաներին, առաջ բերեն համապատասխան հույզեր, ոժանդակեն կոմբաստիարակչության նպատակներին՝ տալով նրանց համապատասխան դիրքավորում (направленность): Ուրախությունը բարձրացնում է յերեխաների տրամադրությունը և նպաստում է ավելի սերտ կապ ստեղծելու ղեկավարի, յերեխաների և նրանց ծնողների մեջ:

Վորպեսզի ստեղծվի տոնական ուրախ տրամադրություն, հարկավոր է հրապարակը կամ շենքը զարգարել կանաչներով, դրոշակներով, պլակատներով: Լողունները պետք է լրացնեն և ուժեղացնեն այն, ինչ վոր արվելու է տոնի միջոցով:

Որինակ, հրապարակի բացման ուրը կարելի է տալ հետևյալ լողունները՝ «Վոչ մի կոլխոզ, վոչ մի սովխոզ առանց հրապարակի», «Արևը, ջուրը, ողբ մեր բարեկամներն են», «Հրապարակը սովորեցնում է ապրել կոլեկտիվ կյանքով», «Դեպի առողջ, աշխատանքային դաստիարակություն», «Մենք Հոկտեմբերի զավակներն ենք»:

Տոնի ժամանակ յերեխաները յերգում են իրենց սովորած յերգերը, ցույց են տալիս ռիթմիկ շարժումներ, անց են կացնում կազմակերպված խաղեր, արտասանում են սովորած վոտանավորներ (մոմենտի համապատասխան), ներկայացնում են կենդանի լրագրեր կամ ինսցեններովկա, (բեմավորում), կազմակերպում են պարեր:

1. ԲԵՐՔԻ ՏՈՆԸ ԿՈՂԽՈՒՄ

Տոնի նախորդակին մեծ յերեխաները պիոներների մասնակցությամբ կազմակերպում են յերթ գյուղի փողոցներով՝ հյուրեր հրավիրելու նպատակով: Առաջնորդը ձեռքին բռնած ունի պլակատ, վորը պատկերացնում է ղեպի մանկապարտեզ շտապող յերեխաներ և ծնողներ: Պլակատի վրա գրված է հրավեր:

Յերեխաները թմբուկի նվագի տակ պիոներների առաջնորդությամբ քայլում են շարքերով: Յերեխաների ձեռքը կարելի է տալ հնչյուն առարկաներ, վորոնց նրանք խփում են (թաս, ձուռան, սուլիչ, զանգուլակներ): Տեղ-տեղ ղեկավարը կանգնեցնում է յերթը և բարձրացնելով դրոշակը յերեխաների հետ ասում է՝

«Բոլորին, բոլորին,
փոքրերին և մեծերին
հրավիրում ենք մենք տոնի՝
Հոկտեմբերի...ին»:

Մանկապարտեզի շինքում տոնի ընթացքում կազմակերպվում է մոմենտին համապատասխան ցուցահանդես: Պատերին փակցնում են հողի և բերքի մշակումը ներկայացնող պրակատներ, գունավոր թղթերով ծածկված դարակներ և սեղանների վրա դասավորում են բերքի արդյունքները՝ բանջարեղեն, մրգեր, ցորենի խուրձ: Տեղ-տեղ շարում են յերեխաների պատրաստած տրակտորները, պատվարակները, արկղները և այլն: Պատերին փակցնում են յերեխաների հաջող նկարները, պատի լրագիրը: Յերեխաները յերգում են «Անհատն ու կոլխոզը» յերգը, կազմում են մեծ շրջան (կոլխոզը) և մեջտեղը փոքր շրջան (մենատնտեսները), շարժումներով ցույց են տալիս անհատի և կոլխոզնիկի աշխատանքը—«մենք ցանում ենք մաղերով»: Տալիս են կենդանի լրագիր բերքի վերաբերյալ, արտասանում վտանավորներ, լողունգներ, յերգում են ու պարում:

Անուհետև յերեխաները կազմակերպվում են հրապարակի շուրջը յերթ պլակատներով, լողունգներով և բերքի եքսպոնատներով:

Պիտներները գնում են առջևից, զարկում են թմբուկ: Վերջը հյուրերին և յերեխաներին հյուրասիրում են մրգերով:

1. Մենատնտեսները **Մենատնտեսն ու կոլխոզը**
 2. կոլխոզնիկը **Սը-խա-տում ենք մեր դաշ-տում ա-րո-րով, ա րո-րով**
 իսկ մեր կոլ խո - զի դաշ-տում սրակ-տո-րով, սրակ-տո-րով:

Մենք ցանում ենք ցորենը մաղերով, մաղերով
 Մենք ցանում ենք ցորենը ցանիչ մեքենայով:
 Բաշում հասկը մանգաղով, մանգաղով, մանգաղով
 Իսկ մեր կալիչ մեքենան պատրաստ խուրձ է տալիս:
 Թողնենք արտըն ու մանգաղ մենք հիմա, մենք հիմա,
 Ու աշխատենք տրակտորով կոլխոզի դաշտերում:

2. Պատգամաբարձի ուր:

Պաշտպանության ուրը կարելի յի կազմակերպել զորքի՝ հետևակի, հեծելազորի, ողաշունների և սանիտարների պարագ (զորահանդես):

Պարադի համար պետք է նախորոք պատրաստել համապատասխան բուտաֆորիա, որինակ՝ զինվորական գլխարկներ, փայտե հրացաններ, դրոշակներ, փայտե ձիեր (ձիու գլուխը ստվարաթղթից՝ համապատասխան գույներով ներկած), թմբուկ, փող և այլն:

Այդ իրերը կարելի յի պատրաստել յերեխաների, պիտներների և ծնողների ողնությամբ: Բեմավորվում է «Զորամասերի զորահանդես (պարադ)»: Թող ղեկավարը դառնա հրամանատար, ընդունի պարադը և վողջունի բոլոր տեսակի զորամասերին:

Կանցնի յերեխաների մի խմբակ, որինակ՝ հետևակը:

Ղեկավարը կասի—«Կեցցեն մեր կարմիր հրաձիգները», և բոլոր հանդիսականները կգոչեն—«ուռառ»:

Նույնը կկրկնվի, յերբ անցնեն մյուս զորամասերը—հեծելազորը, ողաշունները և այլն:

Յերբ բոլոր զորամասերը դուրս են գալիս պարադի, ղեկավարն առում է՝ «ամրացնենք յերկրի պաշտպանությունը»:

Մրան բոլոր զորամասերը պատասխանում են՝

«Յերբ թշնամին հարձակվի,
 Մի մարդու պես կենենք կովի.
 Յեկ թորհուրդները պաշտպանենք,
 Յեկ Կարմիր բանակ մանենք»:

Կարելի յի ցույց տալ նաև զանազան զորամասերի սազմական վարժություններ: Այս վարժությունների միջոցով պետք է ցույց տալ Կարմիր բանակի հզորությունը, ձկունությունը և կազմակերպվածությունը:

Հետևակը ցույց է տալիս, թե ինչպես է նա քայլերթ կատարում և հրացան արձակում՝ թե կանգնած և թե ծընկաչոք:

Հեծելազորը ցույց է տալիս, թե նա ինչպես է ձիով գնում դանդաղ և վազքով: Կարելի յի ճանապարհին դնել վորեկ արգելք (преграда), որինակ՝ փայտ կամ թուղ, վորի վրայով յերեխաները վազելով թռչում են:

Ողաշունները ցույց են տալիս, թե ինչպես են իրենք թռչում: Ողաշունները վազում են դեպի կողք բացած թևերով՝ պտույտների ժամանակ թեքվելով մերթ աջ, մերթ ձախ: Վորպեսզի ցույց տան, վոր սավառակն իջնում է ցած, ողաշունները ծունկ իջնելով նստում են գետնին:

Անուհետև խումբ-խումբ արտասանում են՝

Պատրաստ ենք մենք
 Յեկ միշտ արթուն,
 Սահմաններն ենք
 Պահում, հսկում:

Ուրիշի հող մենք չենք ուզում,
 Մենք սոցիալիզմ ենք կառուցում:

Բայց թշնամին ղենքը ձեռքին
 Մեր յերկիրը յեթի մասին,
 Այն ժամանակ թշնամուն մենք
 Կրակների մեջ կթաղենք:

Պաշտպանում ենք կանգնած արթուն,
Ցերեկը և գիշերն անքուն:

Պաշտպանում ենք քաղաք ու գյուղ,
Յեւ վոչ վոքից չունենք յերկյուղ:

Պաշտպանում ենք միշտ արթուն
Սորհրդային հայրենիք,
Ձեռք զիջի մենք թշնամուն
Թեկուզ հողի մի թղիկ:

Մենք պատրաստ ենք նոր կովի,
Համաշխարհային մեծ մարտի.
Ձեռքս պատրաստ կրակի՝
Կարմիր զինվոր եմ արի:

Կամ «Կարմիր բանակ» չերգ—
«Հեծելազոր անվախ ու քնջ»,
Կամ—պատրաստ զիմիր առաջ»:

Փոքրերը կարող են յերգել՝

«Մեկ, յերկու, ձախը»

կամ՝

«Մենք ուրախ, առույգ մանուկ ենք»:

3. Հաւիսու յեզրափակման հանդես

Հաշվետու հանդեսին պետք է ցույց տալ, թե ինչ են սովորել յերեխաները տարվա ընթացքում մանկապարտեզում և ամառվա ընթացքում — հրապարակում. որինակ՝

1. Ցույց տալ, թե ինչպես են յերեխաները յերգում: Այս հանդեսին յերեխաները յերգում են վոչ բոլոր յերգերը, այլ առավել հաջողները, վոր յերեխաներն ափիլի շատ են սիրում և լավ են յերգում:

2. Ցույց տալ թե յերեխաներն ինչպես են քայլերթում: Որինակ՝ զուգաշարից անցնել միաշարի և կրկին վերադառնալ զուգաշարի:

3. Ցույց տալ իբրև խաղ հանելուկ «Բարև, ծնողներ» խաղը. ցույց տալ, թե աշխատանքային ինչպիսի վարժություններ են ձեռք բերել յերեխաները տարվա ընթացքում: Տես «Բարև, վարպետ» խաղի նկարագրությունը:

4. Բարդ խաղերից ցույց տալ «Մկան թակարդը»:

5. Ցույց տալ անցած պարերը:

Տոները պետք է կազմակերպել ախպես, վոր բոլոր ներկա գտնվողները, ինչպես և հյուրերը, վոչ միայն դիտեն, այլ և մասնակցեն հանդեսի աշխատանքներին՝ ինչո՞վ կարող են, որինակ՝ մասնակցել յերգերին, պարերին, արտասանություններին և, այլն: Տոնը, հանդեսը պետք է լինի փոքրերի համար, բայց մեծերի կենդանի մասնակցությամբ:

Անհրաժեշտ է կազմակերպել աշխատանքի յեզրափակման ցուցահանդես, ցուցադրել յերեխաների նկարները, գրադիտության տետրերը, պոլիտեխնիկ բնույթ կրող աշխատանքները և այլն:

ԲՐԻԳԱԴԻՐ

ԽՈՍԷ Գ. ՀԱՅՐԱՄԵՏՅԱՆԻ

ՅԵՐԱԺԵՏ. ՄԻԲ. ՄԻՐԱՅԱՆԻ

ԱՇԽՈՒՅԷ

Աժ բողջ տարվա ընթացքում, շունեմ վոչ մի ուշացում հարվածա-յին եմ զիտեք,

Ինձ պրս-տրվիկ չը կարծեք: Բրիգադիր եմ, բրիգադիր, գործերին միշտ ուշադիր:

ԲՐԻԳԱԴԻՐ

Ամբողջ տարվա ընթացքում,
 Չունեմ վոչ մի ուշացում.
 Հարվածային եմ զիտեք,
 Ինձ պատրվիկ չկարծեք:

Ղեկավարին միշտ լսում,
 Յերգում, խաղում, վազվզում.
 Աշխատում եմ հյուսնոցում,
 Ու միշտ տանում սոցմրցում:

Բրիգադիր եմ, բրիգադիր,
 Գործերիս միշտ ուշադիր:

Բրիգադիր եմ, բրիգադիր,
 Գործերիս միշտ ուշադիր:

ԿԱՐՄԻՐ ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱՇԽԱՏԻՑԻ

ՅԵՐԱԺՅՏ. Կ. ՋԱԲԱՐՅԱՆԻ

Հէյ, ջան հոկ տեմ-բեր կարմիր ու հաղթող,

մեր մա-տաղ շար-քեր ա-մուր են այ - սոր, մեր մա-տաղ շար-քեր

ա-մուր են այ - սոր,

ԿԱՐՄԻՐ ՀՈԿՏԵՄԲԵՐ

Հէյ ջան, Հոկտեմբեր
 Կարմիր ու հաղթող,
 Մեր մատաղ շարքերն
 Ամուր են այսոր:

Մենք կպաշտպանենք
 Քեզ, ջան Հոկտեմբեր,
 Քո գովքը կանենք,
 Կարմիր Հոկտեմբեր:

Դեն, առաջ, առաջ,
 Կարմիր մանուկներ,
 Դեն, կանչենք անվախ՝
 Կեցցեն Հոկտեմբեր:

ԵՔՍԿՈՒՐՍԻԱ

● ՄԱՐԻ ՅԵՐԳՈՎ

ՅԵՐԱԺՅ՝ ՄԻՔ. ՄԻՐԱՅԱՆԻ

Ա- սալ-ըն-թաց

Թըրկա-հար մի-մանուկ, մի մանուկ, հե-տե-վում են խոմ-բակ հեր շա-րե-շար.

շա-րե-շար: Տրա-լա, լա, լա, լա, լա, լա: տրա լա, լա, լա, լա, լա:

ԵՔՍԿՈՒՐՍԻԱ

Առաջընթաց թմրկահար
Մի մանուկ, մի մանուկ,
Հետևում են խմբակներ
Շարե շար, շարե շար:

Տրա լա, լա, լա, լա, լա, լա:
Դղրդում ե ու թնդում
Մի թմրուկ, մի թմրուկ,
Հառնջ, հառնջ հեռավոր
Ճանապարհ, ճանապարհ:

Ու անընդհատ մեծ շարքով,
Միշտ կարգով, միշտ կարգով
Ձեռքերդ վեր, միշտ զգաստ
Միշտ պատրաստ, միշտ պատրաստ:

ՄԵԿ ՄԱՅԻՍ

Ա Ր Ա Գ

ՅԵՐԱԺՅՏ, ՄԻՔ. ՄԻՐԱՅԱՆԻ

Վառ ա - բե - վը զար-դա-բեց մեր կոլ - խոզ զաշ - - տե - - ըը

մեկ մա-յի - սը գյուղ կան - չեց - , մեր պող-պատ շար - - բե - ըը

ՄԵԿ-ՄԱՅԻՍ

Վառ արևը զարդարեց
Մեր կոլխոզ գաշտերը,
Մեկ մալխաը գյուղ կանչեց
Մեր պողպատ շարքերը:

Յերգ ու կանչը զիւ հնչեց՝
Թունդ լեւան սրտերը,
Այ գրոջով մեք դեմ չեկան
Նոր գյուղի վաշտերը:

Դյսւղ, քաղնք, ամուր կապենք,
Իլիչի ճամբով դնանք՝
Մեր բազկի ուժով կերտենք՝
Նոր աշխարհ ու նոր կյանք:

ՏՐԱԿՏՈՐ

Ա Շ Ի Ո Ւ Ո Վ

ԽՈՍԲ ՅԵՎ ՅԵՐԱԺՅՏ. ՄԻՔ. ՄԻՐԱՅԱՆԻ

Հէյ - ջան տրակ-տոր ջան - բեզ և - մը - նուժ
Մեր կոլ - խո - զը նոր և - նոր - բոյ և - քա - շել -

մեր դաշ - տը - կոլ - խո - զի բան - վոր վաշ - տը -
ո - բե - ցոր ու - նենք յեր - կա - թե տրակ - տոր -

Յեկ մեր ար - տե - ըը վա - ըի - , բամ-բակ ցա- նենք ևս տա-րի
գյու-ղից քը - շենք կու - լա - կին - , ա-ռաջ քա-շենք կոլ-խո-զին:

ՏՐԱԿՏՈՐ

Հէյ, Ղան, տրակտոր Ղան,
Քեզ ե մնում մեր դաշտը,
Կոլխոզի բանվոր վաշտը.
Յեկ մեր արտերը վարի,
Բամբակ ցանենք ես տարի:

Մեր կոլխոզը նոր ե, նոր,
Բոյ ե քաշում որեցոր.
Ունենք լերկաթե արակտոր.
Գլուզից բշխիք կուլակին,
Առաջ քաշենք բատրակին:

ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐ

ԽՈՍԷ՝ Գ. ՄԱՀԱՐՈՒ
Ա Շ Խ Ո Ւ Յ Ց

ՅԵՐԱԿՅՏ՝ ՄԻՔ. ՄԻՐԱՅԱՆԻ

ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐ

(Աշխատանքի յերգ)

Ուս—ուսի, ուս—ուսի,	Ձեռք—ձեռքի, ձեռք—ձեռքի,
Քար—քարին, շար—շարին,	Քար—քարին, շար—շարին,
Քաղցր բեռ մեր ուսին—	Սիրտ—սրտի, յերգ—յերգի—
Շարին, շարին, շարին:	Շարին, շարին, շարին:

Ու նորից ուս—ուսի,
Քար—քարին, շար—շարին,
Քաղցր բեռ մեր ուսին—
Շարին, շարին, շարին:

Զ Ա Վ Ո Ւ

ՓՈՒԱԳՐԵՑ ՄԻՔ. ՄԻՐԶԱՅԱՆ

Տա-րանք ան-կյուն, գը-րինք պա-տի տակ, սե -- դան ա-թու գը-լին

խո-ղո-վակ. Տես մեր գա-վո-ղը վոնց ե գործում, ու կյանք կա-նրա ծոցում:

ԶԱՎՈՒ

Տարանք անկյուն, գրինք պատի տակ
 Սեղան ու աթու, գլխին խողովակ:
 Տես մեր գավողը, վոնց ե գործում,
 Ազմուկ ու կյանք կա նրա ծոցում:
 Մուլիչն ե զի, կատաղի սուլում,
 Մատորն ուժգին բարախում, շնչում:
 Մենք դարբիններ ենք ժիր ու համառ
 կերտում ենք կյանք վողջ լերկրի համար:
 կաշվի փոկերն են արագ թռչում,
 Անիմս անդուլ պատվում, շըջում:
 Դե պատվեք կայտառ անիմսեր,
 Բերեք պայծառ ալ Հոկտեմբերներ:

ԲԵՐՔԻ ՏՈՆ

ԽՈՍԷ Ա. ԽՆԿՈՅԱՆԻ

ՅԵՐԱԺՅ. ՄԻՔ. ՄԻՐԶԱՅԱՆԻ

Բեր-քի տոն ջան, բեր-քի տոն, աշ-խա-տան -- քի

գով-քի տոն. բեր-քի տոն ջան, հե՛յ բեր-

տոն, աշ-խա-տան -- քի գով-քի տոն

ԲԵՐՔԻ ՏՈՆ

Բերքի տոն ջան, բերքի տոն,
Աշխատանքի, գովքի տոն.
Բերքի տոն ջան, հեյ բերքի տոն,
Աշխատանքի, գովքի տոն:

Հովտեմբերիկ ընկերներ,
Հովտեմբերից ձեզ հովեր.
Բերքի տոն ջան, հեյ բերքի տոն,
Աշխատանքի գովքի տոն:

Յերգենք, գովենք այգի, բաղ,
Ծառապտուղ՝ ծառից կախ.
Բերքի տոն ջան, հեյ բերքի տոն,
Աշխատանքի, գովքի տոն:

ԱՇՈՒՆ

ԱՇՈՒՆԺ ՅԵՐԱԺՅՑ. ՄՃԱԿՈՒՄԸ ՄԻՔ. ՄԻՐԱՍՏԱՆԻ

Ա - հա մո - տե - - - ցալ - - - ա - շու - նը կը - կին,

բո - լոր տե - րեվ - նե - - - ըը Թափվում են գե - տին:

ԱՇՈՒՆ

Ահա մոտեցավ
Աշունը կրկին,
Բոլոր տերևները
Թափվում են գետին:

Յեկեք, լերիկեք,
Թափ տանք այս ծառը,
Բաղենք մենք հատուն այս
Տանձ ու խնձորը:

Բացեք բուն ու փեշ,
Բացեք գոգնոցներ,
Տարեք գործարան, վոր
Շինեն կոնսերվներ:

ՓԻՍՈՆ ՈՒ ՄՈՒԿԸ

ՄԵԼՈԴԻԱ - ԼՈՐԱՉՈՒՎ

ՓՈՒՆԱԳՐԵՑ ՅԵՎ ՄԹԱԿԵՑ՝ ՄԻՔ. ՄԻՐԱՅԱՆ

Փի-սոն, փի-սոն թա-փա-մազ, ման ե գա-լիս փազ ե փազ, պոչ ու-նի մի գազ

ՓԻՍՈՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Փիսոն, փիսոն թափամազ,
Ման ե գալիս փազի փազ,
Պոչ ունի մի զազ:

Փակ ե պահում աչքերը,
Բաց ե անում ճանկերը,
Սուր առամները:

Նա գալիս ե միշտ ծածուկ,
Մորթի ունի շաա փափուկ,
Ու փորսում ե մուկ:

Մուկիկ, մուկիկ զգուշացիր,
Զորս բոլորդ լավ նայիր,
Ին փախիր, պահվիր:

Ծ Ի Տ Ը

ԽՈՍՔ՝ Ս. Մ.
m. m. ♩ = 104

ՅԵՐԱԺՅՏ. ԳՈՒՐԳԵՆ ՄԻՐԱՅԱՆԻ

Ծի-տը ծըլ-վը-լում ե ծիվ, ծիվ, ծիվ,

colcanto

— ծի-տիկ եմ ծիտ մի-տիկ եմ, ես ծառ-ից եմ ծառ զը թրու-շեմ

mf

վարդ ու թրու-թուռ յես — կը-ծածեմ, ծի-տիկ եմ, ծիտ մի տիկ եմ

mf

և ծառից են ծառ կը թրռչեն վարդ ու թրռ-թրռ յես — կը ծառեն ծիփ:

ԾԻՏԸ

Ծիտը ծըլվըլում ե—ծիվ, ծիվ, ծիվ.
 Ծիտիկ եմ, ծիտ միտիկ եմ
 Ես ծառից—են ծառ կթռչեմ
 Վարդ ու թրթուր յես կծամեմ—ծիվ:

Ծիտը ծըլվըլում ե—ծիվ, ծիվ, ծիվ.
 Փոքրիկներ քար մի նետեք
 Վտաք ու թեա դուք մի կտարեք
 Իմ ճուտիկներին խնայեք—ծիվ:

ԳԱՐՈՒՆ ՅԵԿԱՎ

ՅԵՐԱԺԵՏ. ՄԾԱԿՈՒՄԸ՝ ՄԻՔ. ՄԻՐԶԱԾԱՆԻ

Գա - րուն յե - կավ, կա - նաչ հա - գավ լե, լե, լե, լե, լե, լե, լե,

կանգ-նեց քա - ըն յեր - գեց կա - քավ, լե, լե, լե, լե, լե, լե.

բա - ը գար - նան տաք ս - ըն — վն լե, լե, լե, լե, լե, լե, լե.

Ըս ըն ծագ կին ծիւ տե-րե-վին, լե, լե, լե, լե, լե, լե, լե:

ԳԱՐՈՒՆ ՅԵԿԱՎ

Գարուն յեկավ, կանաչ հազավ,
 Լե, լե, լե, լե, լե, լե, լե.
 Կանգնեց քարին յերգեց կաքավ.
 Լե, լե, լե, լե, լե, լե, լե, լե:

Բարև դարնան տաք արևին,
 Լե, լե, լե, լե, լե, լե, լե, լե.
 Բարև ծագկին, ծիւ տերեկին.
 Լե, լե, լե, լե, լե, լե, լե:

ԱՌՈՂՋ ՍԵՐՈՒՆԴ

ՅԵՐԱԺՅԵ ՄԻՔ. ՄԻՐԱՅԱՆԻ

Ա Ր Ա Գ

Գեո ա-րե-վը չը - ծա-գած, յեո շո-րերս եմ միշտ հա-գած.

պի-ո-նեք եմ յեո միշտ ըզ-գաստ, ու իմ գոր ծին միշտ պատ-բաստ:

Կի-ո-նե՛ր եմ յես միշտ ըզ-գաստ, ու իմ գոր ծին միշտ պատ-րաստ:

ԱՌՈՂՋ ՍԵՐՈՒՆԴ

Դեռ արևը չծագած,
 Յես շորերս եմ միշտ հագած,
 Պիտներ եմ յես միշտ զգաստ
 Ու իմ գործին միշտ պատրաստ:

Ինձ համար յես առանձին
 Ունեմ փոշի ու վրձին,
 Կվանում եմ յես ամեն որ
 Բերան ատամ կամավոր:

Պիտներ ենք մեզ պարծանք,
 Ամենուրյա խաղ մարզանք,
 Բայցերթում ենք մենք մեկ, յերկու՝
 Հետևելով մեկ մեկու:

Ծագեց, կանչեց ալ արև.
 — Պիտներն էր ձեզ բարև,
 Զրվե՞ծների տակ լողացեք,
 Շողերիս տակ շողացեք:

ՎՈՐՍՈՐԴԸ

ՄԱՐ Կ

ՅԵՐԱԺԵՏ, ՄՅԱԿՈՒՄԸ՝ ՄԻՔ. ՄԻՐԱՅԱՆՆԻ

Սար ու ձոր վոր - սոր - դը վաղ, ա - րեկ ծա - գին

միշտ շըր - շում, վոր զուտ է գին - քը իր ձեռ - քին: Տրա-

լա, լա, լա, լա, լա, լա, լա գին-քը իր - ձեռ-քին լա, քին

ՎՈՐՍՈՐԴ

Սար ու ձոր վորսորդը
 Վաղ արեծագին
 Միշտ շրջում, վորսում է՝
 Ձենքը իր ձեռքին:

Տրա լն, լն, լն,
 Լն, լն, լն, լն,
 Ձենքը իր ձեռքին:

Նա այնպես շրջում է
 Սար ու ձորերում,
 Վոնց հսկա արծիվը՝
 Ձինջ, կապույտ ոտում:

Տրա, լն, լն, լն,
 Լա—լն, լն, լն,
 Ձինջ, կապույտ ոտում:

Հենց վոր նա տեսնում է
 Գայլ, արջ կամ աղվես,
 Հրացանով կրակում է
 Տես, ահա այսպես՝

Տրամ, տրամ, տրամ, տրամ,
 Տրա, տրամ, տրամ, տրամ
 Տես, այսպես:

ՍԱՐՅԱԿՆԵՐԸ

ԽՈՍԷ. 3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

ՅԵՐԱՃՅՏ. ՄԻՔ. ՄԻՐՉԱՅԱՆԻ

Սար- յակ- նե- ըը մեր հեր- վան, ես սը վոր է պի- տի գան.

բայց տը- նե- ըը փուլ յե- կած, պետք չի գա- լու էլ նը- բանց, Բայց տը- նե- ըը

փուլ յե- կած, պետք չի գա- լու էլ նը- բանց, ա- հա- գին

ՍԱՐՅԱԿՆԵՐԸ

Սարյակները մեր հերվան
 Ես ուր վոր ե պիտի գան,
 Բայց տները փուլ ե յեկած
 Պետք չի գալու ել նրանց:

Կարեն, արի միասին
 Նոր տուն շինենք սարյակին,
 Թե չե տեսնի տուն չկա,
 Մեր կոլխոզին մոտ չի գա:

Վորդ ու թրթուր գանաղան...
 Յես ի՞նչ պիտեմ ել ի՞նչ բան,
 Ներս կմտնեն նրանք այգին,
 Վնաս կտան ահագին:

ՓՈՒԲՐԻԿ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

ՅԵՐԱԺԵՏ՝ ԳՈՒՐԳԵՆ ՍԻՐՁՈՅԱՆԻ

ՓՈՔՐԻԿ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Նուճիկ նուճիկ ի՞նչ ես կարում
 — Ռազմի գլխարկ
 — Ռ՞ւմ պիտի տաս.— Մեր Միշիկին,
 Ի՞նչ կանի նա:— Դեի գլխին
 Վոր նա դառնա բանակային — քաջ:

Միշիկ, Միշիկ, ո՞ւր ես գնում
 — Մեր սահմանը:
 — Ի՞նչ անելու— Պաշտպանելու...
 — Ո՞վ ե սպառնում— բուրժուճները,
 Թե վոր կզան՝ գլխին կտամ — բաց:

ՇՈԳԵԿԱՌԻ

ՅԵՐԱԺՅ. ՊՐԵՈՐԱԺԵՆԱԿՈՒ

Նակ յես քաշ կը - տամ հե - տե - վեց հա - զար ձի ու չափս

Fine

Շո - գե - կառք, շո - գե - կառք, սուն վա -

գոն-ներն են վա - զում - ի - րար հեա մոտ քա - ա - սուն

Dal segno ♯

ՇՈՂԵԿԱՌԲ

— Շողեկառք, շողեկառք վր՛խ, չափ, չափ.
 Մենակ յես քաշ կտամ հեռվից հազար ձիու չափ.
 — Շողեկառք, շողեկառք տիկի տակի, տիկի տակի սուն,
 վազոններն են վազում իրար հեա մոտ քառասուն:

— Շողեկառք, շողեկառք ասա ի՞նչ բերիք:
 — Տրակտոր ու սերմացան մեքենա, վարն ուղև ընարիր:
 Շողեկառք, շողեկառք ճոթեղեն ել կա:
 — Բերել եմ ճոթեղեն՝ հակերով խոշոր հալա:

Շողեկառք, ի՞նչ բերիք փոքրիկիս համար.
 Ամբողջ վազոն իրերով լի բերել եմ ձեզ համար.
 Շողեկառք, շողեկառք, ի՞նչ կա մեզ համար.
 — Գրքիք և ուղարկել Հայ Պեանրատը ձեզ համար:

Շողեկառք, շողեկառք, չե՛րբ դու հեա կերթա.
 — Իսկու յն հենց դատարկեն ու հոր ապրանք քարձեն վրաս:
 Շողեկառք, շողեկառք, ի՞նչ կտանես հեա,
 — Պանիր, կարնից ու յեղ, լավ բամբակ, թուրան առ ձեթ:



ԻՌՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

I. Յերածեսական աշխատանքների յեվ յաղերի վերաբերյալ մերողական հս մուս ցուցմունքներ

	Եջ
1. Աշխատանքի սկզբը	4
2. Յերգը շարժումներով	6
3. Նյութի խմբավորումը	7
4. Փոքրահասակները	7
5. Մեծահասակները	8
6. Յերածառության տեղը	8
7. Կազմակերպող մոմենտներ	8
7. Յեզրափակում	10

II. Քայլեր անվերով

1. Շրջան	10
2. Գունակներ	12

III. Վազ

1. Տեղափոխութուն զարգերով	13
2. Տեղափոխութուն զույգերով	13
3. Տեղափոխութուն խմբակներում	14
4. Տեղափոխութուն յեռյակներում	14

IV. Խաղի նշանակությունը

1. Ղեկավարի դերը	19
----------------------------	----

V. Խաղի նշանակությունը

Խաղեր մեծահասակների համար (5-7 տ.)

Ա. Շարժական խաղեր

1. Մրոտող № 1	21
2. Մրոտող № 2	22
3. Սագերն ու աղվեսը	23
4. Տքակտորները յեկան	23
5. Ջիխաղ	24
6. «Գրավել տեղերը»	25
7. «Կատակչին»	26

	ՅՉ
8. Ձկներն ու ձկնորսները	26
9. Անտուն նպաստակը	27
10. Գարթ	28
11. Գիշեր—ցերեկ	29
12. Խուսափել	30
13. Եստօֆետա	31

բ. Նվագ Եարժական խաղեր

1. Արթուն պահակը	32
2. Խփոցիկ	33
3. Նշան փնտուելը	34
4. Ի՞նչն է այստեղ փոխվել	34
5. Անուշաղիլը ողակը	35
6. Մոմ հանգցնելը	35
7. Ուշադիրները	36
8. Ո՞վ է ջեզ կանչողը	37

գ. Խաղեր յերգերով

1. Մկան թակարդ (մկնորս)	37
2. Գե՛ հասի	38
3. Շոգեկառք	39

դ. Նմանողական (իմիտացիան) խաղեր

1. Հայելի	40
2. Ավագ վարտես	41
3. Արհեստանոց	41

ե. Խաղեր սեղանի շուրջը

1. Լոտո հանելուկ	42
2. Յույց ամիք՝ վորտեղ և ձեր ջիթը, ականջը	42
3. Ով է թռչում	43

զ. Խաղեր փոքր յերեխաների համար

1. Ջիտխաղ	43
2. Սագիլ	44
3. Մուկն ու կատուն	44
4. Փուչիկ	44

ե. Վարժուքյուններ յեվ խաղեր բոկով

բ. Նետում

VI. Տոները նախադպրոցական հիմնարկներում

1. Բերքի տոնը կոլխոզում	49
2. Գաղապանության արը,	50
3. Հալվեալու յերգափակման հանգես	52

VII. Յերածեսական նյութեր

ա. Քայլերի յերգեր

1. Բրիգադիւր, յերածառ Միք. Միրզայանի	55
2. Կարմիր Հոկտեմբեր, յերածառ Կ. Չաքարյանի	56
3. Երկուրսիս Միք. Միրզայանի	58
4. Մեկ—մայիս » » »	60

բ. Աեխասանի յերգեր

5. Տրակտոր խոտք և յերածառ Միք. Միրզայանի	61
6. Կոտուցողներ » »	63
7. Չափող փոխադրեց— » » »	64
8. Բերքի տոնը » » »	65
9. Աշուն—յերածառ մշակում » »	67

գ. Յերգեր կենդանիների մասին

10. Փրսոն ու մուկը մշակեց Միք. Միրզայանի	68
11. Ծիտը յերածառ Գուրգեն Միրզայանի	69

դ. Բնության մասին

12. Գարուն յեկավ մշակ Միք. Միրզայանի	71
--	----

ե. Կենցաղային պարերի խաղեր

13. Առողջ սերունդ, յերածառ Միք Միրզայանի	73
14. Վարսորդը յերածառ մշակ » »	75
15. Սարյակները յերածառուի » »	77
16. Փոքրիկ պաշտպանները յերառու Գուրգեն Միրզայանի	79
17. Շոգեկառք յերառու Գրեորեմանյու	81

50

ՀՀ Ազգային գրադարան

NL0838859

ԳԻՆԸ 2 ՈՌՒՐ.

11

26105

ПЕСНИ И ИГРЫ

Дошкольников

Госиздат ССРМ Эривань 1983 г.